Ազգ
Azg
22 ՓԵՏՐՈՒԱՐ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ 30 (4649)
ISSN: 1829-1651

# «Նոր հայտնված» զոհե՞ր, թե՞ գալիք սադրանքների նախանշան

«Փետրվարի 17-ին առավոտյան, ըստ ԼՂ ՊԲ-ի հաղորդագրության, ղարաբաղա-ադրբեջանական զորքերի շփման գոտու հյուսիսարեւելյան հատվածում, Ջրաբերդի ուղղությամբ, ադրբեջանական կողմը դիմել է դիվերսիոն գործողության: Հանդիպելով ՊԲ առաջապահ ստորաբաժանումների կուռ պաշտպանությանը, թշնամու հատուկ նշանակության ջոկատայինները դիմել են փախուստի: Նախնական տվյալներով՝ ադրբեջանական կողմ ունի կորուստներ, իսկ ղարաբաղյան զինուժը կորուստներ չի կրել», այս տեղեկությունը «Ազգը» հրապարակեց փետրվարի 18-ի համարում՝ ավելացնելով, որ, ադրբեջանական աղբյուրները, սակայն, խոսում են «հայկական կողմը նախահարձակ լինելու մասին, որի հետեւանքով վիրավորվել է ադրբեջանցի զինծառայող, 20-ամյա Վուսալ Վասիֆօղլի Բիլանովը»: Վերոհիշյալ համարում հենց «Ազգը, հանդես եկավ դիտարկմամբ, որ շուտով կորուստների մասին լռելը նախընտրող ադրբեջանական աղբյուրները ի վերջո կհրապարակեն ադրբեջանական որեւէ զինծառայողի մահվան մասին լուրեր:

Եվ ահա երեկ հրապարակվեց Ադրբեջանի պաշտպանության նախարարության պաշտոնական հաղորդագրությունը. «Ադրբեջանի զինված ուժերի զորամասերից մեկում, ծանր հանցագործության հետեւանքով սպանվել են Գուլիեւ Նաիբ Ֆահրադին օղլուն, Ջավադզադե Ջավիդ Վեկիլ օղլուն, Սուանվերդիեւ Նուրլան Ռադֆել օղլուն, Խոջբերով Ռամազան Աբդուլլահ օղլուն, Քերիմով Աֆգան Յաշար օղլուն. Հուսեյինով Ահմեդ Ահմեդին օղլուն, ինչպես նաեւ Գուլիեւ Զաքիր Էթիբար օղլուն»: Ադրբեջանական «Թրենդ» գործակալության տվյալներով՝ դեպքը կատարվել է Մուրովդագայի զորամասում: Բացի զոհվածների այս ցուցակից՝ Ադրբեջանի ՊՆ-ն նաեւ հաղորդեց, որ «Փետրվարի 20-ին հայկական զինուժի կողմից բացված կրակի հետեւանքով Ֆիզուլիի շրջանում վիրավորվել է ադրբեջանցի զինծառայող Խիմկետ Ռզազադեն, իսկ Նեւթաչալիսնկի շրջանում զոհվել է Հուսեյինով Թուրալ Մուրադ օղլուն: Փաստորեն մեկ օրվա ընթացքում ադրբեջանական բանակը տվեց 8 զոհ, ընդ որում մեկ զոհն ու վիրավորը, ըստ ադրբեջանական աղբյուրի, «հայկական զինուժի բացած կրակի հետեւանքով»:

Դեպքերի կապակցությամբ ԼՂՀ ՊԲ-ից հայտնում են, որ հիշյալ ժամանակահատվածում ղարաբաղյան կողմը կրակ չի բացել ադրբեջանական դիրքերի ուղղությամբ, իր հերթին ՀՀ ՊՆ-ից տեղեկացնում են, որ. «ԼՂ ՊԲ-ից ստացված տեղեկություններով՝ փետրվարի 20-ին ադրբեջանական կողմն ինքն է բազմաթիվ անգամներ խախտել հրադադարի ռեժիմը»: Չբացառելով, որ ադրբեջանական զոհերի մասին այս տեղեկությունները կարող են հետեւանք լինել ինչպես իրենց բանակում տեղի ունեցող ինքնասպանությունների ու ինքնախեղումների, կամ ադրբեջանական զինված ուժերի ավելի վաղ ձեռնարկած դիվերսիոն գործողությունների, ՀՀ ՊՆ-ից նաեւ հայտնում որ. «Հնարավոր է նաեւ, որ կորուստների մասին բազմաթիվ հրապարակումներով Ադրբեջանը փորձում է հող նախապատրաստել հետագա սադրանքների համար»: Ընդգծենք, որ ՊՆ-ի այս վերջին նախազգուշացումն իրավամբ կարեւոր է, քանի որ մարտի 5-ին նախանշվում է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հերթական հանդիպումը՝ ՌԴ նախագահի միջնորդությամբ: Նման դեպքերում, գաղտնիք չէ, ադրբեջանական կողմը պարբերաբար է դիմում նոր սադրանքների:

Հ. Ա.

ՕՐԵՐԻ ՀԵՏ

# Կադդաֆին այդպես էլ չխելոքացավ

Մինչեւ այս հոդվածի լույս տեսնելը Լիբիայի բռնապետ Մոհամմատ Կադդաֆին թերեւս իշխանազրկված կլինի: Շշից դուրս թռած ջինը շարունակում է իր սատանայական թռիչքները արաբական մայրաքաղաքներում, կայծակի ուժգնությամբ հարվածելով տասնամյակներ շարունակ ձայների առնվազն 99 տոկոս առավելությամբ «վերընտրվող» միապետներին, ցնցելով նույնիսկ թագավորական գահերը՝ Մանամայից մինչեւ Ռաբաթ եւ Ամման…

Այնուհանդերձ շատերին թվում էր, որ Լիբիան զերծ կմնա հեղափոխական հողմապտույտից, հակառակ իր առաջնորդ գնդապետ Մուամմար Կադդաֆիի՝ աշխարհում ամենաերկար՝ 42 տարի շարունակվող բռնատիրությանը: Երկիրը հարուստ է նավթի ու բնական գազի պաշարներով (նավթի համաշխարհային արտադրության 2 տոկոսը պատկանում է Լիբիային):

Բայց երկու բան անտեսում էին վերլուծաբանները՝ ազգաբնակչության աշիրաթական-ցեղախմբային կառուցվածքը (արաբներ եւ բերբերներ) եւ մինչեւ 25 տարեկան երիտասարդության թվի աճը (30 տոկոսը 8 մլն բնակչության): Իսկ որտեղ երիտասարդություն, որը գործազուրկ է եւ ապարտեզային հեռանկարից զրկված (ինչպես Թունիսում, Եգիպտոսում եւ արաբական այլ երկրներում), այնտեղ՝ բողոք, ցասում եւ ընդվզում: Եվ այս ֆոնին՝ մի բռնապետ, որի վերջին հոգսն էր աշխատանքային համապատասխան հնարավորությունների ստեղծումը երկրում: Նավթը վաճառվում է, գազը՝ նույնպես, բանակը զինվում է, հատուկ զորքերն ու վերահսկող զինված կառույցները՝ նույնպես, իսկ ժողովրդի փորը համեմատաբար կուշտ է: Ընդհակառակը, աշխարհի պետական գործիչների մեջ ամենաէքսցենտրիկն ու էքստրավագանտը, տարօրինակն ու խելառը ճանաչված Կադդաֆին շարունակում էր իր արկածախնդիր քաղաքականությունը, տարբեր երկրների դեմ ահաբեկչական ու դիվերսիոն գործողությունների հրահրումն ու ֆինանսավորումը: Հագնում է տարօրինակ, իրեն պահում է տարօրինակ, ինչպես եղավ նախորդ տարի նրա պաշտոնական այցը Մոսկվա, որտեղ Կադդաֆին բնակվեց ոչ թե Կրեմլի իրեն հատկացված հյուրատանը, այլ պարտեզում՝ իր հետ բերած հսկա վրանի տակ…

Լիբիայի բռնապետը համոզված էր, որ ինքը Մարգարեի հաջորդն է երկրի վրա, որպես ամենաթանկարժեք նվեր իր պաշտոնական հյուրերին նվիրում էր շքեղաշուք հրատարակված իր տրակտատները: Մինչ նրա 7 պաշտոնական որդիներից Սայֆ ալ Իսլամը (բառացի թարգմանությամբ՝ «Իսլամի սուրը») պատրաստվում էր ժառանգելու հոր գահը:

Գնդապետ Կադդաֆին իշխանության էր տիրացել 1969 թ.-ին, Բենգազիում սկիզբ առած անարյուն զինվորական հեղաշրջմամբ: Այդ հեղաշրջումը կազմակերպել էր Մոսկվան Տրիպոլիում իր դեսպանի՝ Խորհրդային Հայաստանի կենտկոմի նախկին 1-ին քարտուղար Սուրեն Թովմասյանի ղեկավարությամբ: Հետագայում, արդեն Երեւանում, վերջինիս հետ հանդիպումներից մեկի ընթացքում, ՌԱԿ բազմամյա ղեկավար պրոֆեսոր Բարունակ Թովմասյանը մտերմաբար նրան հարցրել էր. «Չէի՞ր կարող ավելի խելոք գնդապետ գտնել», Ս. Թովմասյանը հանգստացրել էր իր հյուրին. «Ոչինչ, ջահել է դեռ, կխելոքանա»:

Կադդաֆին այդպես էլ չխելոքացավ: Երեկ գիշեր նրա վարձկանները ռազմական օդանավերով ռմբակոծում էին ժողովրդին:

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Մեկը հուշագիր է դեմ տալիս, մեկն էլ՝ «բունտի գեշ խասայաթ»

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Անցած շաբաթ քաղաքական դաշտում ինչ-որ որոշակիություն, այնուամենայնիվ, մտավ: Կոալիցիոն նոր հուշագիրը, անկախ նրա ձեւակերպումների իրավական բովանդակությունից, գոնե արտաքնապես որոշ ժամանակով կոալիցիոն գզվռտոցներին վերջ դրեց: Արդեն նշել ենք, որ հակասությունները երկու մեծ միավորների՝ ՀՀԿ-ի եւ ԲՀԿ-ի միջեւ սրվում էին ամենատարբեր ուղղություններից, ընդ որում նետված քարերը երբեմն այնպես էին դիպչում քաղաքական առաջնորդների ինքնությանը, որ հաճախ նրանք կամ նրանց դիրքորոշումը ներկայացնող գործիչները բուռն արձագանքելով (նրանք էլ մարդիկ են) կրակի վրա յուղ էին լցնում: Չի կարելի ասել, թե որքան կտեւի արտաքնապես ամուր թվացող զինադադարը՝ կոալիցիոն հուշագրի տեսքով, եւ նույն «կռվացնող» կենտրոնները էլ ի՞նչ ռեզերվային միջոցներ կգտնեն՝ իրար դեմ լարելու կոալիցիոն կոնգլոմերատի զույգ հզոր ուժերին: Իսկ որ այս զույգի կռվշտոցը բխում է բացառապես բոլոր մյուս քաղաքական ուժերի շահերից, անգամ նրանց երրորդ կոալիցիոն գործընկերոջ՝ դրանում ոչ ոք, կարծում ենք, չի կասկածում: Այնպես որ անկախ հուշագրից եւ երեկվա ընթացքում միմյանց ուղղված ականջահաճո ձեւակերպումներից՝ էլի ոչ ոք չի կասկածում, որ միմյանց դեմ գզռելու գործելակերպը որոշ ժամանակ հետո «հայտնի ուժերը» աշխատեցնելու են, այս անգամ գուցե նոր, անհայտ միջոցներ են գործադրելու: Իսկ կոալիցիոն հուշագիր ստորագրած երկու մեծ ուժերի առաջատար գործիչները պետք է կարողանան հավասարակշիռ պահվածքով տոն չտալ ու չընկնել ուրիշների լարած ծուղակները: Այլ մի խնդիր են, սակայն, հուշագրի ձեւակերպումների մեջ եղած տարընթերցումները: Արդյո՞ք հենց սա է սպասում Հայաստանի բազմաչարչար ընտրողն իշխանական առաջնորդներից ու քաղաքական ուժերից, թե այսպես ու այնպես՝ միմյանց հաշվին ուժերի հարաբերակցություն չենք փոխելու, Ազգային ժողովում էլ ներկայացվածության աճի են հանգեցնելու:

Տես էջ 3

# ԱՄՆ պետքարտուղարի տեղակալները ժամանում են տարածաշրջան, այնուհետեւ ՀՀ նախագահը կմեկնի Պետերբուրգ

Փետրվարի 23-24-ը ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ջեյմս Սթայնբերգն ու պետքարտուղարի եվրոպական եւ եվրասիական հարցերով օգնական Ֆիլիպ Գորդոնը կժամանեն տարածաշրջան: Նախատեսվում է, որ այցի առաջին օրը ամերիկացի դիվանագետները կլինեն Երեւանում, որտեղ հայաստանցի պաշտոնյաների հետ կքննարկեն «հայ-ամերիկյան երկկողմ հարաբերություններին առնչվող, ինչպես նաեւ տարածաշրջանային հարցեր՝ մասնավորապես ղարաբաղյան խնդրի կարգավորման գործընթացը», այս մասին տեղեկացրել է ՀՀ ԱԳՆ մամուլի քարտուղար Տիգրան Բալայանը: Ըստ Բաքվում ԱՄՆ դեսպանատան պաշտոնական հաղորդագրության՝ փետրվարի 24-ին արդեն Սթայնբերգն ու Գորդոնը կլինեն Բաքվում: Դեսպանատունը չի մանրամասնել ամերիկացի դիվանագետների՝ Ադրբեջանում կայանալիք հանդիպումների օրակարգը, միայն նշել է, որ նրանք Բաքու կժամանեն Թբիլիսիից: Հատկանշական է, որ ԱՄՆ պետքարտուղարության բարձրաստիճան պաշտոնյաները տարածաշրջան են ժամանում մարտի 5-ից առաջ. հիշեցնենք, ինչպես ավելի վաղ հայտարարել էր Բաքվում ԱՄՆ նորանշանակ դեսպան Մեթյու Բրայզան, հենց այդ օրը Սոչիում նախատեսվում է Սարգսյան-Մեդվեդեւ-Ալիեւ հերթական, այս տարվա առաջին հանդիպումը: Ամերիկացի դիվանագետների այցի հաջորդ օրն արդեն, ինչպես տեղեկանում ենք ՀՀ նախագահի մամուլի գրասենյակից, «փետրվարի 25-ին նախագահ Սերժ Սարգսյանը աշխատանքային այցով կմեկնի Սանկտ Պետերբուրգ, որտեղ նախատեսված է ՀՀ նախագահի հանդիպումը Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հետ»:

Հ. Ա.

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ

**հրապարակում է**

Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի 2010թ. նվիրատուների անվանացանկը եւ խորին շնորհակալություն հայտնում բոլորին: Նվիրատուների անվանացանկը այբբենական կարգով կհրապարակվի մեր օրաթերթի չորս հաջորդական՝ փետրվարի 22-ի, 23-ի, 24-ի եւ 25-ի համարներում: Այսօր տպագրում ենք ցանկի առաջին խմբաքանակը:

# Ասացինք՝ ոչ, էլի, yok

Հերթական անգամ թուրքական մամուլի միջոցով թերեւս առավել վերեւ կանգնած օղակներ փորձում են հող շոշափել հայ-թուրքական գործընթացի հնարավոր զարգացումների ու կենդանության ձեւերի առնչությամբ: Այս անգամ էլ թուրքական մամուլը բարձրաձայնում է, թե հաջորդ ամիս հնարավոր է հայ եւ թուրք դիվանագետների հանդիպում՝ Ռուսաստանի միջնորդությամբ, Մոսկվայում:

Չնայած ամենաբարձր մակարդակով Թուրքիայում արվող հայտարարություններին, թե «լուռ» ու չգիտես էլ ինչ կարգի դիվանագիտություն է իրականացվում, հայկական կողմը քանիցս ընդգծել է, որ Հայաստանի նախագահի՝ հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման գործընթացի սառեցման մասին հայտարարությունից հետո որեւէ հանդիպում ու քննարկում տեղի չի ունեցել:

«Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համար նոր բանակցությունների կարիք չկա՝ անկախ ձեւաչափից: Կան ստորագրված արձանագրություններ, որոնք պետք է վավերացնել եւ իրականացնել առանց նախապայմանների: Սա է միջազգային հանրության եւ Հայաստանի դիրքորոշումը», մեկնաբանելով Ռուսաստանի միջնորդությամբ հայ-թուրքական բանակցությունների մասին լուրերը՝ այսպես է արձագանքել Հայաստանի ԱԳՆ խոսնակ **Տիգրան Բալայանը**:

Ա. Հ.

# Նաեւ Մամեդյարո՞վը

«Ներքին մաքրազարդում իրականացնող իշխանական թիմը նախապատրաստվում է նաեւ արտաքին գործերի նախարար Մամեդյարովին պաշտոնանկել», գրում է Pia.az տեղեկատվական-վերլուծական կայքը եւ հղում անում իր «դիվանագիտական աղբյուրներին»: Ըստ այդմ, կայքը տեղեկացնում է, որ հայտնի է նաեւ Մամեդյարովին փոխարինողի անունը: Լրատվամիջոցի իմացությամբ, ԱԳ նախարարի պաշտոնում նշանակվելու է ԱՄՆ-ում Ադրբեջանի դեսպան Յաշար Ալիեւը: Իսկ վերջինիս փոխարինելու է Էստոնիայում Ադրբեջանի դեսպան, նախկին ԱԳ նախարար Թոֆիգ Զուլֆուգարովը: Որպես իր տեղեկացվածության վկայություն, Pia.az-ը վկայակոչում է Յաշար Ալիեւի աննախադեպ շփումներն ադրբեջանական եւ ամերիկյան լրատվամիջոցների հետ: Թեեւ դա ԱԳ նախարար Մամեդյարովի մոտալուտ պաշտոնանկության նախանշան դժվար է համարել, այդուհանդերձ, դիտարժան է, որ դեռեւս անցյալ աշնան խորհրդարանական ընտրությունների համատեքստում էր, որ ադրբեջանական մի շարք փորձագետներ կանխագուշակել էին ԱԳ եւ պաշտպանության նախարարների հնարավոր պաշտոնանկությունը:

Որեւէ կապ ունի՞ Մամեդյարովի հնարավոր պաշտոնանկությունը ԼՂ հարցով բանակցություններում առկա իրավիճակին, թե՞ դա ներքաղաքական ենթատեքստ ունի միայն՝ առայժմ այդ մասին ոչինչ հայտնի չէ: Մամեդյարովն ԱԳ նախարարի պաշտոնն զբաղեցնում է Հեյդար Ալիեւի ժամանակներից: Նա ունի կիրթ դիվանագետի համարում:

Անհավանական չէ ենթադրել, որ Մամեդյարովի պաշտոնանկությամբ Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը կարող է ունենալ նոր դրսեւորումներ: Բայց, թերեւս, ամենահետաքրքրականն այն է, որ նման տեղեկություններ ադրբեջանական մամուլ են սպրդում Սոչիում անհնավորված եռակողմ հանդիպման վերաբերյալ կանխատեսումների համապատկերի վրա:

Վ. Ա.

# ԵԱՀԿ գործող նախագահը կգա Երեւան եւ Բաքու

*Բոլորը կոչ անում են, բայց դիպուկահարներին շփման գծից հեռացնելու հարցում Ադրբեջանի վրա ոչ ոք չի կարողանում ազդել*

**Մարտի սկզբին Երեւան եւ Բաքու կայցելի ԵԱՀԿ գործող նախագահը, իսկ մինչ այդ տարածաշրջանում կլինի ԵԱՀԿ գործող նախագահի՝ ձգձգված հակամարտությունների հարցերով հատուկ ներկայացուցիչ Գեդրյուս Չեկուլիսը: Այս մասին «Մեդիամաքս» գործակալությանը տված հարցազրույցում տեղեկացրել է հենց Չեկուլիսը:**

**Հիշեցնելով, որ 2010թ. դեկտեմբերին Աստանայում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի պատվիրակությունների ղեկավարները Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հետ համաձայնության եկան, որ «եկել է ավելի վճռական գործողությունների ժամանակը ղարաբաղյան հակամարտության կարգավորման համար», ԵԱՀԿ գործող նախագահի հատուկ ներկայացուցիչը կարծիք է հայտնել, թե «պետք է աշխատենք միասին՝ հիմնվելով այդ ընդհանուր ըմբռնման վրա: Մենք գիտակցում ենք, որ դեռ կան շատ դժվարություններ, սակայն լիովին խրախուսում ենք ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների աշխատանքը՝ լարվածության սաստկացումը կանխելու եւ երկխոսությունը շարունակելու նպատակով, ներառյալ, իհարկե, Ռուսաստանի Դաշնության ջանքերը»:**

**Թե ինչ կոնկրետ քայլեր է ձեռնարկելու ԵԱՀԿ-ում ներկայումս նախագահող Լիտվան ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ, Չեկուլիսը նշել է, որ ԵԱՀԿ լիտվական նախագահությունը կփորձի օժանդակել Հայաստանի եւ Ադրբեջանի, ինչպես նաեւ կազմակերպության այլ անդամ-երկրների հետ քննարկումներին՝ վստահության ամրապնդմանն ու տեղերում ԵԱՀԿ դիտորդական գործունեության ուժեղացմանն ուղղված միջոցառումների հնարավորությունները դիտարկելու նպատակով:**

**«Այդ կապակցությամբ մենք ողջունում ենք նախագահների վերջին համաձայնությունը հրադադարի ռեժիմի կայունացման եւ ռազմական ոլորտում վստահության ամրապնդման միջոցառումների իրականացման մասին: Լիտվայի նախագահությունը պատրաստ է աջակցել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին եւ անել անհրաժեշտ ամեն ինչ այդ համաձայնությունը կյանքի կոչելու համար», հավաստիացրել է Չեկուլիսը:**

**ԵԱՀԿ գործող նախագահի հատուկ ներկայացուցիչը որեւէ պատասխան չի տվել ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցություններն այլ ատյաններ տեղափոխելու Բաքվի փորձերի մասին հարցին, բացի կրկնելուց, թե Լիտվան աջակցում է ԵԱՀԿ Մինսկի խմբի եւ նրա համանախագահների ջանքերին, ովքեր ունեն հատուկ միջնորդական մանդատ:**

**«Բաքվում եւ Երեւանում կայանալիք հանդիպումների ժամանակ ես մտադիր եմ ընդգծել վստահության ամրապնդմանն ուղղված միջոցառումների կարեւորությունը, ներառյալ դիպուկահարների հեռացումը, ինչպես այդ մասին հայտարարել է ԵԱՀԿ գործող նախագահը այս շաբաթ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստում», կարծես թե ադրբեջանական մերժողականությանն անտեղյակության պատճառով այսպիսի հավակնոտ հայտարարություն է արել Չեկուլիսը, ավելացնելով. «Վստահությունը կարող է ամրապնդվել միայն այն ժամանակ, երբ դադարի արյունահեղությունը»:**

**«Մենք Հայաստանին ու Ադրբեջանին կոչ ենք անում բանակցություններում առաջընթացի հասնելու համար ձեռնարկել անհրաժեշտ քայլերը՝ հիմնված ՄԱԿ-ի կանոնադրության եւ Հելսինկյան եզրափակիչ ակտի, մասնավորապես ուժ եւ ուժի սպառնալիք չգործադրելու, տարածքային ամբողջականության, հավասար իրավունքների եւ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքների վրա: Հակամարտությունների խաղաղ կարգավորումն այլընտրանք չունի, եւ Լիտվան, լինելով ԵԱՀԿ համանախագահող երկիր, մտադիր է հակամարտության մեջ ներգրավված կողմերին կոչ անել վերահաստատել ուժի կիրառումից ձեռնպահ մնալու իրենց պարտավորությունը»:**

**Թերեւս հատկապես Ադրբեջանի համար, որտեղ լրատվամիջոցները հասցրել են անհարիր հայտարարություններ վերագրել ԵԱՀԿ գործող նախագահին, կամ վերջինիս հայտարարությունները «մաքրագրելու» համար Չեկուլիսը հայտարարել է. «Լիտվան սատարում է առանց բացառության բոլոր սկզբունքներին, որոնք նշվել էին Ֆրանսիայի, ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի նախագահների կողմից 2009 թ. Լ՚Աքվիլայում եւ 2010 թ. Մուսկոկայում արված հայտարարություններում»:**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «ԳԱԼԱ» ՀԸ-ի դատական հետապնդումը՝ վերսկսված

**Փետրվարի 17-ին Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը դատավոր Շիրակ Հակոբյանի նախագահությամբ բավարարել է Գյումրու քաղաքապետարանի հայցը՝ «ԳԱԼԱ» հեռուստաընկերության հիմնադիր «ՉԱՊ» ՍՊԸ-ին պարտավորեցնելով մեկամսյա ժամկետում ապամոնտաժել քաղաքի Վ. Սարգսյան 6/1 հասցեում գտնվող հեռուստաաշտարակի գագաթնային հատվածում տեղադրված հաղորդիչ ալեհավաքն ու մալուխը: Սա նշանակում է, որ նշված կարճ ժամանակամիջոցում խնդրի տեխնիկական այլ լուծում չգտնելու դեպքում «ԳԱԼԱ»-ին եթերազրկում է սպառնում: Հեռուստաընկերությունը հայտարարել է, որ մտադիր է վճիռը բողոքարկել վերաքննիչ դատարանում:**

**Այս կապակցությամբ անցած ուրբաթ համատեղ հայտարարությամբ հանդես են եկել Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն, Երեւանի մամուլի ակումբը եւ Գյումրու Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը: «Երեք տարուց ավելի տեւած, դատական բոլոր ատյաններով անցած ու վճռաբեկ դատարանի կողմից հօգուտ «ԳԱԼԱ»-ի բեկանված գործի քննության հերթական փուլում ընդունված նման վճիռը, մեր գնահատմամբ,- ասվում է հայտարարության մեջ,- իշխանական տարբեր օղակների կողմից հեռուստաընկերության դեմ 2007 թվականից նախաձեռնված ճնշումների շարունակությունն է եւ նոր սպառնալիքներ է ստեղծում խոսքի ու ԶԼՄ-ների ազատության համար:**

**Մենք՝ ներքոստորագրյալ լրագրողական կազմակերպությունների ներկայացուցիչներս, կոչ ենք անում իրավասու ատյաններին՝ քայլեր ձեռնարկելու ոչնչով չարդարացված այս հետապնդումները վերացնելու համար: Գալիք ընտրություններից առաջ մեծապես կարեւորում ենք լրատվամիջոցների նկատմամբ ճնշումների դադարեցումը՝ տեղեկատվական ոլորտում առողջ մթնոլորտ ապահովելու նկատառումներով»:**

**Տեղեկացնենք, որ չնայած անցյալ տարի «ԳԱԼԱ»-ն հեռուստաընկերությունների թվային հեռարձակման հաճախականությունների մրցույթում պարտվեց նույն հաճախականության համար դիմած «Ցայգ» ՀԸ-ին, սակայն անալոգային հեռարձակման համար ստացած արտոնագիրը նրան հնարավորություն էր տալիս հեռարձակում իրականացնել մինչեւ 2014 թվականի վերջը:**

Գ. Մ.

***Խմբ. կողմից***. *- Համենայնդեպս, վերոհիշյալ կամ այլ ՀԿ-ներից որեւէ մեկը ցարդ չի կարողացել շոշափելի որեւէ օգնություն ցույց տալ «ԳԱԼԱ»-ին:*



# Խորհրդաժողով Թեհրանում

Թեհրանի Հայ դատի հանձնախումբը, որը հայտնի է «Հուսկ» անունով, փետրվարի 17-18-ին Թեհրանի Զարմահալ միությունում կազմակերպել էր «Հայ Դատն այսօր» 8-րդ խորհրդաժողովը, որը կրում էր «Տարածաշրջանը վերջին իրադարձությունների լույսի ներքո» խորագիրը: Բացման խոսքից հետո ելույթ են ունեցել Թեհրանի հայոց թեմի առաջնորդ **Սեպուհ արք. Սարգսյանն** ու Հայաստանի դեսպան **Գրիգոր Առաքելյանը**: Դեսպանը խոսել է հայ ժողովրդի բարեկամ, նորվեգացի գիտնական ու դիվանագետ Ֆրիտյոֆ Նանսենի մասին, նշել, որ այս տարի լրանում է Ֆ. Նանսենի 150-ամյակը: Հոբելյանի կապակցությամբ Հայաստանում կազմակերպվելու են միջազգային եւ ուսանողական գիտաժողովներ, նախատեսվում է հրատարակել Նանսենի մասին պատմող 30 հատորով շարք ու կառուցել Նանսենի թանգարան: Երեւանում եւ Գյումրիում տեղադրվելու են Նանսենի կիսանդրիները: Խորհրդաժողովին հրավիրված հայ զեկուցողները եղել են քարտեզագրագետ **Ռուբեն Գալչյանը,** թուրքագետ **Ռուբեն Մելքոնյանն** ու «Սիվիլիթաս» հիմնադրամի փորձագետ **Թաթուլ Հակոբյանը**: Հայաստանում Իրանի նախկին դեսպան Մոհամմադ Ֆարհադ Քոլեյնին խորհրդաժողովին եւս հանդես է եկել ելույթով, որի թեման եղել է «Ղարաբաղի հիմնահարցն ու Հայաստանի հայացքները»:

Ի. Պ.

# Մալթյան ինքնիշխան ուխտի հայազգի դեսպանը Երեւանում

Հայաստանի ԱԳ նախարար **Էդվարդ Նալբանդյանը** երեկ ընդունել է Մալթայի ինքնիշխան ուխտի դեսպան **Ժան-Միշել Ուղուրլյանին**՝ հավատարմագրերի պատճենի հանձնման կապակցությամբ: ԱԳՆ մամուլի ծառայությունից հայտնում են, որ նախարար Նալբանդյանը վստահություն է հայտնել, որ դեսպանի հայկական ծագումը ավելի կդյուրացնի նրա գործունեությունը Հայաստանում: Շնորհակալություն հայտնելով բարեմաղթանքների համար՝ դեսպան Ուղուրլյանն ասել է, որ կանի առավելագույնը՝ Հայաստանում Մալթայի ինքնիշխան ուխտի ծրագրերի ընդլայնման համար: Նշենք, որ Երուսաղեմի Սբ Հովհաննեսի, Հռոդոսի եւ Մալթայի ինքնիշխան ռազմական ուխտը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, կազմավորվել է 1961 թ. հունիսի 27-ին: Այն համարվում է Երուսաղեմում դեռեւս 1080 թ. հիմնադրված Բարեխնամ ասպետական ուխտի իրավահաջորդ կառույց, որն ի սկզբանե կոչված է եղել խնամել Սուրբ երկիր ուղեւորված հիվանդ ու աղքատ ուխտագնացներին: Խաչակրաց առաջին արշավանքի ընթացքում, 1099թ. Երուսաղեմի նվաճումից հետո, այն իր իսկ արտոնությամբ դարձել է ռազմական ուխտ: Այսօր Մալթայի ինքնիշխան ուխտն ունի 12.500 անդամ եւ 80.000 մշտական կամավոր, որոնք բարեգործական եւ բժշկական առաքելություններ են իրականացնում աշխարհի տարբեր անկյուններում:




Հ. Ա.

# Հունվարին 7,7 տոկոս տնտեսական ակտիվության աճ

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության հրապարակած 2011-ի առաջին՝ հունվար ամսվա սոցիալ-տնտեսական ցուցանիշների համաձայն, Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) կազմել է 7,7 տոկոս: Տեղեկացնենք, որ այս տարվանից Ազգային վիճակագրական ծառայությունն անցնում է մակրոտնտեսական ցուցանիշների հավաքման, հրապարակման եւ ամփոփման նոր մեթոդի: Մասնավորապես դադարեցվում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ամսական հաշվարկումը: Փոխարենը, որպես տնտեսության վիճակը գնահատող ամսական ցուցանիշ, ներկայացվելու է տնտեսական ակտիվության ցուցանիշը, իսկ ՀՆԱ ցուցանիշները հրապարակվելու են եռամսյակային եւ տարեկան կտրվածքով: Նոր մեթոդին անցումը վիճծառայությունը կատարել է Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի եւ Եվրոմիության փորձագետների խորհրդատվության հիման վրա: Այդ մեթոդին անցել են նաեւ ԱՊՀ մի շարք երկրներ: ՏԱՑ-ը, ըստ վիճծառայության պարզաբանումների, ընդգրկում է տնտեսական գործունեության բոլոր տեսակները եւ սկզբնապես հաշվարկվում է նախորդ տարվա տարեկան միջին գներով, ինչը հնարավորություն է տալիս ունենալու տվյալ ամսվա արտադրանքի թողարկման ծավալի իրական փոփոխությունները նախորդ ամսվա եւ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ: Այն չի բնութագրում ավելացված արժեքի փոփոխությունը եւ չի ընդգրկում արտադրանքի զուտ հարկերը:

Այսպիսով, եթե տնտեսական ակտիվության ցուցանիշը նախորդ տարվա հունվարի նկատմամբ աճել է 7,7 տոկոսով, ապա դեկտեմբերի նկատմամբ նվազել է 50,6 տոկոսով: Նախորդ տարվա հունվարի համեմատ աճ են արձանագրել մեր տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը, բացառությամբ գյուղատնտեսության: Մասնավորապես, արդյունաբերությունը այս տարվա հունվարին 2010-ի հունվարի նկատմամբ աճել է 5,7 տոկոսով, իսկ դեկտեմբերի նկատմամբ նվազել 28,2 տոկոսով: Էլեկտրաէներգիայի արտադրությունը աճել է 20,6 տոկոսով, դեկտեմբերի նկատմամբ՝ 1,2 տոկոսով: Շինարարությունն ունեցել է 0,9 տոկոս աճ, իսկ դեկտեմբերի նկատմամբ՝ 86,9 տոկոս անկում: Ծառայությունների ոլորտում անցյալ տարվա հունվարի նկատմամբ զգալի՝ 24,3 տոկոս աճ է արձանագրվել, իսկ դեկտեմբերի նկատմամբ՝ 22,4 տոկոս անկում: Մանրածախ առեւտրում արձանագրվել է նույն ցուցանիշն, ինչ անցյալ տարվա հունվարին, իսկ դեկտեմբերի նկատմամբ գրանցվել է 64,3 տոկոս անկում: Գյուղատնտեսության արտադրանքի ծավալը, ինչպես արդեն նշեցինք, նվազել է՝ 2,5 տոկոսով, իսկ դեկտեմբերի նկատմամբ՝ 52 տոկոսով:

Արտաքին առեւտրաշրջանառությունը 2011-ի հունվարին 2010-ի հունվարի նկատմամբ ավելացել է 2,3 տոկոսով եւ կազմել 321,6 մլն դոլար: Արտահանումը կազմել է 66,3 մլն դոլար, արձանագրելով 21,3 տոկոս աճ: Ներմուծումը կազմել է 255,3 մլն դոլար՝ նվազելով 1,7 տոկոսով: Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը կազմել է 189 մլն դոլար:

Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում հունվարին կազմել է մոտ 104 հազար դրամ, մասնավոր հատվածում կազմել է 131 հազար դրամ, պետականում՝ 81 հազար դրամ:

Եթե համադրենք հունվարի ցուցանիշները դեկտեմբերի հետ, ապա ինչպես եւ կարելի է ենթադրել, բոլոր ցուցանիշների առումով անկում է արձանագրվել: Ինչը բնական է, քանի որ դեկտեմբերին տնտեսական ակտիվությունը սովորաբար անհամեմատ բարձր է, քան հունվարին:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 375010 Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Փողոցային առեւտրով զբաղվողների համար քաղաքապետարանը շուկաներ կկառուցի

Հայկական բնավորության համաձայն, որեւէ գործ նախաձեռնելիս միշտ վերջից ենք սկսում. նախ ընդունում ենք կարեւորագույն որոշումները, հետո մտածում մի շարք նրբությունների մասին: Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանի պաշտոնավարությունը սկսվեց փողոցային առեւտրի դեմ պայքարով: Այդ կերպ են սկսել իրենց գործունեությունը Երեւանի գրեթե բոլոր քաղաքապետները, սակայն հետագայում բախվել են սոցիալական լուրջ խնդրի ու դադարեցրել գործունեությունը:

Այս առումով, Կարապետյանն անդրդվելի էր: Մի քանի օր շարունակ քաղաքապետարանի դիմաց փողոցային առեւտրով զբաղվողների բողոքի ակցիաներն իրավիճակը չփոխեցին: Փողոցային առեւտրով զբաղվողների հարցը բարձրացվեց ավագանու նիստի ժամանակ, սակայն քաղաքապետի պատասխանը կտրուկ էր. «Փողոցային առեւտուր չի լինելու»:

Միանգամայն իրավացի որոշում կայացնելուց հետո միայն քաղաքային իշխանությունները հասկացան, որ կատարված աշխատանքում եղել են անփույթ: Նույն սոցիալական խնդրին բախվեցին նաեւ նրանք: Խնդիրը հետեւյալն էր. դրսում առեւտուր կատարողներին, առանց որեւէ առաջարկության, ուղղակի արգելում են փողոցներում առեւտուր անել. 3.000 մարդու ընտանիք հայտնվում է պոտենցիալ մուրացկանի դերում: Քաղաքապետարանում էլ հասկացան, որ շուկաներում կանգնելու համար վարձավճարը շատ բարձր է, բոլորը չէ, որ կարող են օրական մի քանի հազար դրամ վարձ մուծել ու տուն պահել:

Իսկ քաղաքապետարանը լծակներ չունի շուկայի տնօրեններին պարտադրելու, որ խելքին մոտ վարձավճար պահանջեն: Հետեւաբար մինչ որեւէ բան պահանջելը անհրաժեշտ է ինչ-որ բան առաջարկել:

«Մի՞թե ճիշտ չէր լինի նախ փոքրածավալ շուկաներ կառուցել կամ փորձել պայմանավորվածություն ձեռք բերել շուկաների տնօրենների հետ վարձավճարի վերաբերյալ եւ միայն դրանից հետո որոշում ընդունել ու պայքարել փողոցային առեւտրի դեմ», «**Ազգ**»-ի դիտարկմանը «Հենարան» ակումբում Երեւանի քաղաքապետարանի առեւտրի եւ սպասարկման վարչության մասնագետ **Հովհաննես Ղալեչյանի** պատասխանն անհասկանալի էր. «Շուկաների տնօրեններին չենք կարող գին թելադրել: Բացի դրանից՝ դուք տրամաբանական կհամարե՞ք, որ գործող շուկաների պարագայում նոր շուկաներ կառուցվեն», ասաց նա: Սակայն ավելի ուշ իր խոսքում Ղալեչյանն ասաց, որ պայմանավորվածություն է ձեռք բերվել Էրեբունու շուկայի տնօրենի հետ մինչեւ 6 ամիս ժամկետով անվճար տարածք տրամադրելու վերաբերյալ: Նրա մեկնաբանությամբ, ներկա դրությամբ, երբ շուկաները թերծանրաբեռնված են, անհնար է պահանջել ցածր գին: Այդ կապակցությամբ քաղաքապետարանը մտադիր է մի քանի փոքրածավալ շուկաներ կառուցել:



Արմեն Պողոսյան, Հովհաննես Ղալեչյան

«Քաղաքապետի նախնական հավանությանն են արժանացել 9 առաջարկներ, նախագծերը ներկայացվել են քաղաքի դիզայներին, ամենայն հավանականությամբ այս տարի կկառուցվեն 4-5 փոքրիկ շուկաներ: Այս պարագայում մրցակցություն կսկսվի, եւ կսահմանվի ողջամիտ գին», ասաց Ղալեչյանը:

Սպառողների ասոցիացիայի նախագահ Արմեն Պողոսյանին էլ Երեւանը հիշեցնում է արաբական շուկա. «Մայթերում, գետնանցումներում, փողոցներում մարդիկ մթերք են վաճառում»: Պողոսյանն ուշադրությունն է հրավիրում սննդի անվտանգության խնդրին. «Որտե՞ղ է լվացվում ասֆալտին կանաչի վաճառողը»: Նա առաջարկում է առեւտրականին չհալածել, ընդամենը այլ տեղ աշխատելու առաջարկ անել.

Արմեն Պողոսյանը հիշում է, որ տարիներ առաջ Տիգրանյան փողոցը անվանում էին «Կարտոշկի փողոց»: «Երեւանի քաղաքապետը (Պողոսյանը նախընտրեց անունը չհրապարակել-Հ.Հ.) որոշեց, որ պայքարում է փողոցային առեւտրի դեմ, սիզամարգի վրա բետոն փռեց, կառուցվեցին կրպակներ ու փողոցային առեւտուրը շարունակվեց, սակայն կորցրեցինք 200 մետր կանաչ տարածք», հիշում է նա:

Բազմաթիվ առեւտրականների՝ շուկաներում աշխատելու առաջարկը մերժելը Ղալեչյանը հոգեբանական խնդիր է որակում:

«Նախկինում փողոցային առեւտրի դեմ պայքարը սոցիալական ճնշման հետեւանքով գործընթացի կեսից դադարեցվել է, նրանք կարծում էին, որ այս անգամ էլ այդպես կլինի, սակայն քաղաքապետարանը վճռական է», ասաց նա՝ հավելելով, որ ներկա դրությամբ Երեւանի ողջ տարածքով դադարեցված է փողոցային առեւտուրը:

Նրա տվյալներով՝ փողոցային առեւտրով զբաղվողների թիվը չի գերազանցում 2500-ը: Հարցին, թե որքանն են համաձայնել շուկայում աշխատել, Ղալեչյանն ասաց, որ թիվն անընդհատ փոփոխվում է. «Ներկա դրությամբ նրանց թիվը 150- 200 է»:

Թե, իր խոսքերով, բողոքավորները քանի հոգի են կազմում եւ հրաժարվում շուկաներում աշխատելուց, քաղաքապետարանի առեւտրի եւ սպասարկումների վարչության մասնագետը զարմանալի ու անհասկանալի թիվ ներկայացրեց. «Բողոքավորները, որ համաձայն չեն այս որոշմանը, ընդամենը մի քանի տասնյակ են»: Իսկ ի՞նչ եղավ մնացած 2000-ը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅ ԿԱԶԱԿՆԵՐ

# Կաթողիկոսին հանձնվեց հայ կազակության բարձրագույն պարգեւը

Փետրվարի 18-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը ընդունել է Հայ-կազակական բարեկամության եւ համագործակցության միջազգային միավորման (ՀԿ ԲՀՄՄ) պատվիրակությանը՝ կազմակերպության ղեկավար Կարապետ Ջաղոյանի գլխավորությամբ: Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀԿ ԲՀՄՄ-ի՝ Հայաստանում ծավալած գործունեությանն առնչվող հարցեր: Մասնավորապես քննարկվել է ՀՀ պետական սահմանի հասվածների պաշտպանությանը կազակական միավորումների մասնակցելու խնդիրները: Մայր աթոռի եւ ՀԿ ԲՀՄՄ-ի միջեւ համագործակցության շրջանակներում Գարեգին Երկրորդի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ հայ կազակական կազմակերպությանը հոգեւոր հովիվ տրամադրելու վերաբերյալ: Առհասարակ՝ հայ-կազակական գործունեության հանդեպ դրսեւորած ուշադրության համար Ամենայն հայոց կաթողիկոսին շնորհվել է հայ կազակության գերագույն պարգեւը՝ Լորիս-Մելիքովի անվան 1-ին աստիճանի շքանշան, ինչպես նաեւ Պլատովի անվան 1-ին աստիճանի շքանշանի փաստաթղթերը:

Հ. Ա.

# «ԲՀԿ-ի խոսքի ու գործի միջեւ հակասություն չկա»

Անցած ուրբաթ ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը, կոալիցիոն նոր հուշագիրը մեկնաբանելիս, ենթադրել էր, թե հավանաբար ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն եւ ՕԵԿ-ը միասնական ցուցակով են գնալու ընտրություններին: Այդպիսի ենթադրություն է արել երեկ նաեւ ՀՀԿ-ական Գագիկ Մելիքյանը: Իսկ էլի երեկ լրագրողներին հանդիպած ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանի խոսնակ Խաչիկ Գալստյանը չբացառեց այդ, այսինքն՝ ընտրություններին միասնական կոալիցիոն ցուցակով գնալու հնարավորությունը, բայց նաեւ ասաց, որ այդպիսի որոշում դեռ չի կայացվել, եւ անգամ այդպիսի հարց դեռ չի քննարկվել «Կարեւորն այն է, որ միասնական ֆորմատով, միասնական ճակատով մասնակցենք», ասաց նա՝ մեկնաբանելով, թե միասնական ճակատ ասելով՝ նկատի ունի կա՛մ միասնական ցուցակը, կա՛մ որ առանձին-առանձին մասնակցելուց հետո կոալիցիոն կուսակցությունները միավորեն ստացած ձայները»: Խ. Գալստյանը նաեւ հերքեց, թե ԲՀԿ-ին պարտադրվել է կոալիցիոն նոր հուշագիրը՝ պարտադրված համագործակցությունը երկար կյանք չի ունենում, իսկ ընդհանրապես՝ հուշագրի ստորագրումով ապացուցվեց ԲՀԿ-ի՝ ի դեմս նրա առաջնորդ Գագիկ Ծառուկյանի, այս երկրի սթափ մտածող եւ ծանրակշիռ դերակատարում ունեցող քաղաքական ուժերից մեկն է, եւ այս որոշումն իսկապես լուրջ քննարկումների, ծանրակշիռ պահվածքի եւ լայնախոհության արդյունք է, նոր հուշագրի ստորագրումն էլ Հայաստանի առջեւ ծառացած արտաքին ու ներքին մարտահրավերներին դիմակայելու եւ կոալիցիոն ուժերի միջեւ երկարաժամկետ ռազմավարական համագործակցության ցուցիչ է. «Հուշագիրն ապահովելու է մեր երկրի առաջընթաց զարգացումը՝ տալով մեզ կայունություն, կանխատեսելիություն եւ կոնսոլիդացիա»: Իսկ թե ինչու էր ավելի վաղ Գ. Ծառուկյանը հայտարարել 50+1 տոկոս ձայն հավաքելու մասին, ըստ Խ. Գալստյանի՝ որպես պատասխան զանազան սոցիոլոգների եւ բախտագուշակների հայտարարությունների:

Իսկ հուշագրի այն դրույթը, որով ամրագրվում է գալիք խորհրդարանական ընտրություններին քաղաքական կշիռը չավելացնել եւ կոալիցիայի ներսում ուժերի հարաբերակցությունը չփոխել՝ միմյանց դեմ պայքար ծավալելու հաշվին, ըստ Գալստյանի՝ ներկոալիցիոն կայունության պահպանմանն է ուղղված, քանի որ պարբերաբար լինում էին որոշակի սրացումներ ՀՀԿ-ի եւ ԲՀԿ-ի միջեւ, բայց եւ իհարկե, խորհրդարանական ընտրություններին ԲՀԿ-ն, ինչպես եւ ամեն քաղաքական ուժ, կձգտի ավելացնել իր քվեները, իսկ ընդհանրապես՝ ուժերի հարաբերակցությունն միայն ու միայն ընտրողն է որոշում: Իսկ թե ինչու հուշագրում նշված չէ, որ նախագահական ընտրություններում կոալիցիան պաշտպանում է Սերժ Սարգսյանին, այլ միայն՝ գործող նախագահին, Խ. Գալստյանը ոչ մի էական տարբերություն չգտավ «գործող նախագահ» եւ «Սերժ Սարգսյան» ձեւակերպումների միջեւ:

Ի վերջո Ռոբերտ Քոչարյանի նախագի՞ծն է «Բարգավաճ Հայաստանը», թե՞ ոչ: Ըստ Խ. Գալստյանի՝ ԲՀԿ-ն իր ինքնուրույն ուժ լինելն ու Գագիկ Ծառուկյանի շուրջը համախմբված լինելը վաղուց ապացուցել է ու «որեւիցե անձնավորության կցորդը կուսակցությանն անհարիր է»:

Մի խոսքով՝ ԲՀԿ-ն չի խախտելու նոր կոալիցիոն հուշագիրը, 2013 թվականի նախագահական ընտրությունների նախօրեին դուրս չի գալու կոալիցիայից, Քոչարյանի մեծ քաղաքականություն վերադառնալիս էլ՝ «ԲՀԿ-ի խոսքի եւ գործի մեջ տարբերություն չկա»:

Խ. Գալստյանը նկատեց նաեւ, որ ընդդիմությունն էլ լավ կլինի միավորվի, մանավանդ ընդդիմադիր դաշտում լուրջ ուժեր տեսավ՝ ի դեմս «Ժառանգության», ՀՅԴ-ի եւ ՀԱԿ-ի:

Մ. Խ.

# Մեկը հուշագիր է դեմ տալիս, մեկն էլ՝ «բունտի գեշ խասայաթ»

*1-ին էջից*

Թե՞ կուզեր լսել, թե թույլ ենք տալու, ընտրո՛ղ, դու որոշես՝ ով գործ է արել, նրան էլ ընտրես, նրա քվեն էլ ավելացնես: Մինչդեռ այս՝ հուշագրային միավորումը կարծես «Մեր դեմ խաղ չկա» կանոնն է մի ավելորդ անգամ հաստատում: Եթե իսկապես այս քաղաքական միավորները տարբեր շահեր չունենային հատկապես ընտրական տիրույթում, ապա նախկին կոալիցիոն համաձայնագիրն էլ հերիք էր՝ չէ՞ որ նրանով եւս համագործակցության հնարավորության պակաս չկար: Սակայն նոր հուշագիրը հենց հուշում է, թե որքան տարբեր են այս երեք միավորների հավակնություններն ու դրանց իրագործման կասկածի տակ լինելը: Հուշագիրը, բացի ժամանակավոր զինադադարի դրական երեւույթից, այդպիսով, իր մինուսները եւս ունի, եւ դա չտեսնելն առնվազն նշանակում է, որ մերոնք մի փոքր կարճատես են դարձել. այն ժողովրդավարության դասական կանոնների մեջ չի տեղավորվում: Ի՞նչ է նշանակում՝ միմյանց հաշվին կշիռ չավելացնել, իսկ եթե ընտրողն ավելացնի՝ ի՞նչ են պատրաստվում անել, ձայները միմյանց նվիրե՞լ: Բա որտե՞ղ մնաց ընտրության՝ միմյանց դեմ պայքարի տրամաբանությունը: Չէ՞ որ մեր ժողովուրդը նախ անարդարության, իր ձայնը տեղ չհասնելու դեմ է բողոքում: Բացի այդ, իսկապես, հիմնիկվանից նախընտրական երեւույթն ունեցող դաշինքն իսկապես էլ վարչական ռեսուրսի կենտրոնացում է ենթադրում, ինչը մի ավելորդ անգամ կհուսահատեցնի ընտրողին, կստիպի ինչ-որ բան փոխելուց հրաժարվել ու ձեռքը թափ տալ: Իսկ որ ավելի կարեւոր է՝ վարչական ռեսուրսն, իսկապես, ավելի կընդլայնի կոալիցիայի տիրույթները եւ խորհրդարանում, եւ գործադիր ու հարակից կառույցներում, իսկ խորհրդարանում առանց այդ էլ փոքրիկ ընդդիմությունն ավելի նվազեցնելու ձգտումը առնվազն զարմանք է հարուցում, քանի որ ինչքան ուզում է հզոր կոալիցիա ստեղծեք՝ հզոր ընդդիմություն չունեցող, գերկենտրոնացած իշխանությունն իրականում թույլ, լավ չաշխատող կառույց է, քանի որ նրան սթափեցնողներն են քիչ ու թույլ: Ու չնայած հուշագիրը երեկ ՀՀԿ-ական **Արտակ Զաքարյանը** քաղաքական համագործակցության նոր մոդել էր անվանում, բայց փաստն այն է, որ նոր հուշագրով մինչեւ այժմ գործող մոդելն ավելի կարծրացում է պարզապես: Կյանքը ցույց կտա՝ ԲՀԿ-ն կբավարարվի՞ նրանով, ինչ այժմ ունի, թե՞, այնուամենայնիվ, քայլեր կանի հզորանալու եւ հուշագրի թույլատվության սահմանը խախտելով՝ կփորձի իրական մրցակցություն ապահովել, ինչպես երեկ **Խաչիկ Գալստյանն** էր ասում՝ ժողովրդի ձայնով որոշելու համար ապագա խորհրդարանի պատկերը, չնայած հուշագիրը, փաստորեն, նրան թույլ է տալիս այնքան ձայն ունենալ, որքան այժմ ունի:

Որոշ հստակություն մտավ նաեւ ընդդիմադիր քաղաքական դաշտում. ՀԱԿ-ի ու ԺԿ-ի՝ իրար հասցեին հիշոցների նետումը, կարելի է ասել, լույսի արագությամբ հեռացրին նրանց իրարից, թեեւ երկուսին էլ մոտիկից իմացողները չէին էլ կասկածում, որ նրանց հեռացնողն ավելի շատ է, քան մոտեցնողը: Չնայած «Ժառանգությունը» ներկայացուցիչ էր ուղարկել ՀՅԴ միջոցառմանը եւ ՀԱԿ-ի հանդեպ էլ մեծ ջերմեռանդություն չի ցուցաբերում՝ սակայն ամեն ինչից երեւում է, որ ՀԱԿ-ը ոչ մեկի հետ չի ուզում միանալ՝ նրա ամբիցիաները դա թույլ չեն տա, եւ իշխանությունը հազիվ թե ստանա իր նման գերկենտրոնացած ընդդիմություն: Սա մի կողմից ենթադրելու է իշխանական եւ ընդդիմադիր՝ տարբեր խաղի կանոններով գործող թեւեր, որը ե՛ւ դրական, ե՛ւ բացասական պահեր ունի իր մեջ (այդ մասին՝ մի ուրիշ անգամ): ՀԱԿ-ի հանրահավաքում Տեր-Պետրոսյանի վերջին ելույթում էլ առանձնապես չնախանշվեց, թե նա ի՞նչ է պատրաստվում անել՝ ընդդիմությունից ոչ մեկին չի կանչում-վանում է ավելի շատ, իսկ իր հույսն այն է, որ «եթե իշխանությունները եզրակացություններ չանեն այդ ուսանելի իրադարձություններից (խոսքը Թունիսի եւ Եգիպտոսի մասին է), ապա վաղ թե ուշ նույնը տեղի է ունենալու նաեւ Հայաստանում, ինչի «ողջ պատասխանատվությունն ընկնելու է Սերժ Սարգսյանի ու նրա ղեկավարած ավազակապետական վարչախմբի վրա»: Ու էլի ոչ մի դեղատոմս՝ արտահերթ նախագահական ու խորհրդարանական ընտրություններից բացի, էն էլ՝ «սոցիալական բունտի գեշ խասայաթին սպասելով»: Այսինքն՝ ինչ տեսել ենք վերջին տարիներին, այս հունով էլ փորձում են մերոնք շարժվել՝ հաշվի չառնելով, որ ժողովուրդն է փոխվել:

# Ռեալպոլիտիկի եւ մարդու իրավունքների արանքում

## Եվրոպան ինչպես պիտի վարվի բռնակալական ռեժիմների հետ

«Կանցլեր Մերկելը, թունիսյան եւ եգիպտոսյան իրադարձությունները նկատի առնելով, խոստացել է մարդու իրավունքների հարցում այլեւս որեւէ փոխզիջում չանել: Ինչպես են երիտասարդ բազմաթիվ ակտիվիստներ այսպիսի խոստումը պահպանելու վրա հույս դնում, այնուհետեւ այդ հույսը իրականում հաճախ ի դերեւ է ելնում, ցույց է տալիս Ադրբեջանի օրինակը», փետրվարի 13-ին այսպիսի նախաբանով սկսեց իր լուսաբանումը գերմանական ARD-ի Tagesschau-ի եթերից Զիլվիա Շռյբերը: Ադրբեջանի վերաբերյալ այսպիսի դիտարկում վերջին շրջանում ոչ միայն հաճախ չես լսի, ինչը «Վիքիլիքսի» սառույցը հալեցնելուց հետո ակնկալվում էր, այլեւ երկակի ստանդարտների մամլիչով գերմանական զանգվածային լրատվամիջոցներում հրապարակ են նետվում միայն այնպիսի «մտահոգություններ», ինչից նավթի հոտն ուղղակի գլխապտույտ է առաջացնում: Ստորեւ ներկայացվող Զիլվիա Շռյբերի՝ դիպուկ գնահատականներով (ու մեր թեթեւակի կրճատումներով) հաղորդումը միգուցե փոխելո՞ւ է գերմանացիների հայացքը: Հուսանք:

Երբ խոսքն ապագայի ծրագրերին է վերաբերում, արտասահմանում կրթություն ստացած ադրբեջանցիները չգիտեն, թե տանն ինչից սկսեն: Եթե ինչ-որ բան ես ուզում անել, պիտի կառավարության կլանի հետ գործ ունենաս, ասում են նրանք: Դեռ խորհրդային ժամանակներից հարավկովկասյան հանրապետությունը գլխավորող հայր Հեյդար Ալիեւից իշխանությունը ստացած որդու՝ նախագահ Իլհամ Ալիեւի շրջապատի ընտանիքներն են վերահսկում տնտեսությունը: Թեպետ կառավարությունը նավթաեկամուտներից ստացված ֆինանսավորմամբ ապահովում է երիտասարդ ուսանողներին կրթաթոշակներով, ուղարկում արտասահման, նույնիսկ բնապահպանական հիմնադրամին դրամ հասկացնում, բայց ով իշխանությունների հետ չի դաշնակցում կամ հրապարակավ հակադրվում է նրանց, զգում է դրա ատելի կողմը: Բնական է՝ առաջին հերթին սրան են բախվում լրագրողները, ակտիվիստները, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, ընդդիմադիրները: Հարվարդի շրջանավարտ Բախտիար Հաջիեւը նոյեմբերին խորհրդարանական ընտրություններին էր մասնակցում: Ի տարբերություն իշխող կուսակցության թեկնածուների, նրա գրանցումը շաբաթներ է տեւել, իսկ մեքենայություններով անցկացված ընտրություններով ձեւավորված խորհրդարանում ընդդիմադիր քաղաքական որեւէ գործիչ չի ներկայացված:



*Միայն կառավարության շենքը չէ, որ Ադրբեջանը ժառանգել է ԽՍՀՄ-ից: Դադարից հետո իշխանությունը վերստանձնեց Հեյդար Ալիեւը, ինչն այժմ որդու ձեռքում է:*

### Պատժելու համար՝ բանակ

Ընտրություններից հետո Հաջիեւին չի արտոնվել երկրից դուրս գալ: Բանակում ծառայությունից խուսափելու համար նա պիտի կանգնի դատարանի առջեւ: Հաջիեւի կարծիքով, իր դեմ գործը քաղաքական է, քանի որ իշխանություններն ուզում են իր նման ակտիվիստներին «չեզոքացնել»: Ադրբեջանուհի անկախ լրագրող Խադիջա Իսմայլովան տեղյակ է նմանօրինակ դեպքերի եւ հայտնում է, թե ադրբեջանական իշխանությունները վաս համբավ են ձեռք բերել, քանի որ այլակարծությամբ աչքի ընկածներին են պարտադրում բանակ գնալ: Ծառայությունը դժվար է եւ պատիժ է համարվում նրանց համար, ովքեր քննադատում են կառավարությանը: Կամայականությունը եւ կոռուպցիան ամենուր են Ադրբեջանում: Ներքաղաքական խնդիրներից շեղելու հրաշալի միջոց է անընդհատ հնչող պատերազմական հռետորիկան՝ ուղղված հարեւան Հայաստանին, որ տնօրինում է Լեռնային Ղարաբաղի վիճարկելի տարածքը:

Այնուհետեւ հեղինակն անդրադառնում է ԽՍՀՄ-ից անկախացած Ադրբեջանի պատմությանը, հիշեցնելով, թե 1993-ին Բաքու է վերադառնում Հեյդար Ալիեւը, որպես ընտրյալ նախագահ, ավտորիտար քաղաքականությամբ կայունացնում երկիրը: Դիտորդները քննադատում են, թե նա օգտագործում էր նավթային հարուստ եկամուտները՝ իր սեփական կլանը հովանավորելու նպատակով: 2003-ին հոր մահից հետո նախագահ է հաստատվում որդի Իլհամը՝ ԵԱՀԿ-ից ոչ ազատ ու անարդար գնահատված ընտրություններով: Ադրբեջանը ոչ միայն նավթարդյունահանող, այլեւ Կենտրոնական Ասիայից գազ ու նավթ առաքող տարանցիկ երկիր է: «Նաբուկոյի» ծրագրված շինարարությունը Ադրբեջանին կենտրոնական երկրի նշանակություն է հաղորդում:

Կրթություն ստացած բազմաթիվ երիտասարդներ, որ արտասահմանում նաեւ փորձ են կուտակել, հայրենի երկրում իրենց ապագան սահմանափակված ու անհեռանկար են տեսնում: Նրանց հայացքն ուղղված է Եվրոպային: Եվ կանցլերի՝ Մյունխենի անվտանգության կոնֆերանսում հնչեցրած արտահայտությունը, թե մարդու իրավունքների հարցում փոխզիջում չի լինելու եւ ամեն տեսակի համագործակցության մեջ նախ եւ առաջ պիտի նկատի առնել մարդու իրավունքները, նեցուկ կանգնելու խոստման է նմանվում:

Բայց ի՞նչ դիրքորոշում կորդեգրի Արեւմուտքը մի երկրի հանդեպ, որը Ռուսաստանի եւ Իրանի միջեւ գազ եւ նավթ փոխադրող կարեւորագույն ուղի է, որի մասնակցությունը «Նաբուկկո» ծրագրին անխուսափելի է, որը տարիներ է կապված ՆԱՏՕ-ի Գործընկերություն հանուն խաղաղության ծրագրին եւ ծառայում է որպես միջանկյալ կայարան Աֆղանստան ուղեւորվող փոխադրամիջոցների համար, որի առաջնորդությունը իր ռազմավարական առավելությունն է, որն այնպես է գործադրում, որ բոլոր մեծ ուժերին իր հանդեպ բարեհա՞ճ է պահում:

ԵՄ արտաքին հանձնակատար Քեթրին Էշթոնի՝ նոյեմբերին խորհրդարանական ընտրությունների առիթով արված արձագանքը Ադրբեջանին անշուշտ դողալու առիթ չի տվել: Նա քաջալերում է ադրբեջանցի պաշտոնյաներին մեծ ճիգ գործադրել՝ ստանձնած միջազգային պարտավորությունները ժողովրդավարական, մարդու իրավունքների սկզբունքների համեմատ կենսագործելու: Ադրբեջանը ԵՄ-ի կարեւորագույն գործակից է՝ պատրաստ են սատար կանգնել հետագա քաղաքական բարեփոխումներին: ԵՄ-ն առաջարկում է ասոցացված պայմանագիր, վիզայի թեթեւացված կարգ, առեւտրի ազատ գոտի: Քանի դեռ ադրբեջանական առաջնորդները նավթային եկամուտներից են օգտվում եւ անարգել ճամփորդում, սրանք թույլ խթան են: Նախագահ Ալիեւը անցյալ տարիներին 4 անգամ եղել է Գերմանիայում: Մյունխենյան կոնֆերանսին էլ էր հրավիրված, հյուր էր Դավոսի տնտեսական ֆորումին: Արտգործնախարարության խոսնակը, շարունակում է «Թագեսշաուի» վերլուծաբանը, ի պատասխան հարցման ասել է, թե դաշնային կառավարությունը Ադրբեջանի առջեւ էլ կանոնավոր դնում է իր պահանջները՝ բարելավում մարդու իրավունքների, ժողովրդավարության, իրավական պետության հարցում: Սա մեր հետաքրքրությունների, նաեւ արժեքներով ղեկավարվող արտաքին քաղաքականության մաս է կազմում:

Բայց իրենց կառավարության հանդեպ քննադատական վերաբերմունք ունեցող բազմաթիվ ադրբեջանցիների ընկալմամբ՝ ԵՄ-ի եւ Գերմանիայի վերաբերմունքը, մեղմ ասած, շատ չափավոր է: Երիտասարդ ուսանողներն իրենց հույսն են արտահայտում, թե ԵՄ-ը Ալիեւի եւ նրա զինակիցների դեմ կվճռի պատժամիջոցներ կիրառել, ինչպես Բելառուսի նախագահի բռնակալ Լուկաշենկոյի դեմ է արվում: Տարեց լրագրողները, հակառակը, բացահայտ հիասթափություն են ցույց տալիս: ԵՄ-ը եւ Գերմանիան թեեւ ժողովրդավարական արժեքներ են քարոզում, բայց հետեւողական չեն արձագանքում մամուլի եւ կարծիքի ազատության ապացուցելի սահմանափակումներին:

### Մարդու իրավունքները՝ նավթի դիմաց

«Մեկուսացումը շատ անգամ ժողովրդավարության չի ուղղորդում: Բնականաբար՝ Եվրոպական միությունը պիտի բազմաթիվ երկրների հետ աշխատի, որոնք մեր պատկերացրած ժողովրդավարությունը չունեն», ասում է Բունդեսթագի պատգամավոր Անդրեաս Շոքենհոֆը: Օրինակ՝ Չինաստանն էլ ժողովրդավար չէ, բայց ի հեճուկս դրա պիտի կառուցողական աշխատանք տանել, շեշտում է քրիստոնեա-դեմոկրատ քաղաքական գործիչը, որ 1998-ից սկսած ՔԴ միության խմբակցության ղեկավարն է արտաքին հանձնաժողովում:

Ընդդիմադիր քաղաքական գործիչ Հաջիեւն ասում է, թե մինչեւ որոշակի աստիճան հասկանում է հեռացնելու փոխարեն երկրները կապելու հաշվարկը: Բայց Ադրբեջանի կառավարությունը կարծում է, թե կարող է զբաղվել նավթի եւ մարդու իրավունքների, գազի եւ ժողովրդավարության, ազատության եւ այլընտրանքային էներգետիկ պաշարների միջեւ փոխանակման առեւտրով: Այդ պատճառով էլ նա ավելի մեծ ճնշում եւ ԵՄ-ի երկրներից ավելի հստակ ուղերձ է ուզում: Միակուսակցական պետության կայունությունն առավել մեծ ռիսկ է պարունակում:





*Քարտեզում ԼՂ-ն պատկերված է Ադրբեջանից տարբեր՝ Հայաստանի գույնով:*

### Ո՞ւմ սատարել

Շոքենհոֆն էլ է տեսնում այդ վտանգը: Քանի որ Ադրբեջանի հետ «Նաբուկկոյի» նման նախագծեր են հետապնդում, Գերմանիայի համար պիտի միեւնույն չլինի, թե ինչ է այնտեղ կատարվում: «Ավտորիտար ռեժիմը տեւական կայունություն չունի»: Նրա լուծումը հետեւյալն է՝ աջակցել ժողովրդավարական շարժումներին: «Բայց հարցն այն է, թե Ադրբեջանում ո՞ւմ կարող ենք սատարել»: Նա այնտեղ հենման կետ չունի, որ ժողովրդավարական շարժում կարողանա կազմակերպել, եւ որին օգնել կարելի կլինի: Ցավոք, հաճախ է պատահում, որ այսպես կոչված ընդդիմադիր քաղաքական գործիչները սեփական մեծամտությունից դրդված՝ միաբան չեն, ասում է Շոքենհոֆը:

Բայց ընդդիմության թուլությունն էլ հենց պաշտոնյաների ճնշումների հետեւանք է: Օրինակ՝ վերջերս իսլամական կուսակցություններից մեկի ղեկավարը ձերբակալվել է, որովհետեւ գլխաշորի արգելքի դեմ բողոքի ալիք է բարձրացրել: Փետրվարի 5-ին ընդդիմադիր Ժողովրդական ճակատ կուսակցության 20-ամյա անդամներից մեկին ձերբակալել են՝ մոտը թմրամիջոց ունենալու մեղադրանքով, ինչը երիտասարդը խիստ ժխտում է: Աշխարհում ճանաչված երկու բլոգերներ Էմին Միլլին ու Ադնան Հաջիզադեն տարիներ առաջ իրենց նախաձեռնած հրապարակումներից ավելի նվազ հրատապ ոլորտների են անդրադառնում, պատճառն այն է, որ ցույցերի ժամանակ ծեծվելու ու ձերբակալվելու ռիսկի դիմել էլ չեն ուզում: Այդուհանդերձ 17 ամսվա բանտարկություն ստացան: Որ նրանք նոյեմբերին վաղաժամ ազատ արձակվեցին, պարտական են միջազգային պահանջին՝ Բունդեսթագի պատգամավորներից մինչեւ ԱՄՆ նախագահ Բարաք Օբամա:

### Հոռետեսություն ի հեճուկս փոքր հաջողության

Նաեւ ուրիշ պարագաներում էլ երբեմն փոքր հաջողություններ են գրանցվում: Դեկտեմբերին Բաքվում «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամը կոնֆերանս էր կազմակերպել, որի ժամանակ ադրբեջանցի մասնակիցները ազատ կարողացել են խոսել այնպիսի թեմայի մասին, ինչպիսին կարծիքի ազատությունն է: Երկարժամանակյա դադարից հետո առաջին անգամ կոնֆերանսին մասնակցում էր թշնամացած հարեւան Հայաստանից մի քաղաքական գործիչ: Թեպետ նա անընդհատ հսկվել է, բայց կարողացել է ազատ խոսել մամուլի հետ:



*Ադրբեջանում շատերն իսլամի չափավոր կողմնակիցներ են: Կառավարությունը, սակայն, կարծր միջոցներ է ձեռնարկում իսլամական ընդդիմադիրների հանդեպ:*

Այսպիսի եզակի հաջողություններ Ադրբեջանի ակտիվիստներից շատերի հոռետեսությունը քիչ են փոխում: Գործնականում յուրաքանչյուրն է հասկանում, թե նավթային օժանդակումներից ստացված մուտքերն արդեն հասել են գագաթնակետին: Բլոգեր Ադնան Հաջիզադեն երկյուղում է, թե կառավարությունը հետո ավելի կարծր միջոցառումներով փորձ կանի իր իշխանությունը պահել: Ընդդիմությունն այնժամ լիովին կկործանվի: Բայց Եգիպտոսի եւ Թունիսի օրինակը ցույց է տալիս, որ հասարակության մեջ խոսակցի բացակայությունը հենց կառավարության համար կարող է վտանգավոր լինել: Այնտեղ (խոսքը Թունիսի մասին է - Ան. Հ.) կարճ ժամանակամիջոցում զարգանում է ընդդիմադիր կառուցվածքից, առաջնորդից զուրկ ժողովրդական մի շարժում: Երբ Թունիսի նախկին նախագահը զայրացած ամբոխին ուզում էր զիջումներով դիմել, բացակայում էր բանակցող անձը՝ գործակիցը: Նա չէր կարողանում ժողովրդի պահանջներին արագ արձագանքել, քանի որ բնակչության հետ հաղորդակցությունից զուրկ էր: Վերջ ի վերջո զանգվածների շարժման ընթացքը ստիպեց նախկին նախագահին գլխապատառ փախչել երկրից:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

*Լուսանկարներն ըստ Tagesschau-ի*

# Տրամաբանականի եւ անտրամաբանականի միջեւ

Նոր եռակողմ հանդիպման նախօրեին, բնականաբար, մեծ է քաղաքագիտական եւ վերլուծաբանական հանրության հետաքրքրությունը՝ ի՞նչ կտա հանդիպումը, կհաջողվի՞ բանակցությունները տեղաշարժել «մեռյալ կետից», եթե՝ այո, ապա առաջընթա՞ց կարձանագրվի, թե՞...

Մինչ լուրջ մարդիկ մտասանջվում են այս եւ այլ հարցերի շուրջը, Ադրբեջանում, որտեղ ըստ էության շատ ավելի շահագրգռված պիտի լինեին բանակցությունների հաջողությամբ, դարձյալ շրջանառվել է «վերջին հնարավորության» թեման:

Նման պատասխանատու խնդիրն, իհարկե, էժանագին խոսակցությունների առարկա դարձել է իշխանությունների համաձայնությամբ կամ էլ նրանց ուղղակի հանձնարարականով:

Այս եզրահանգման ենք գալիս, մանավանդ, ծանոթանալով Մուբարիզ Ահմեդօղլուի հարցազրույցին, որ նա բացառիկության կարգով տվել է Aze.az-ին: Ինչո՞ւ ենք կարծում, որ իշխանությունների պատվերն է: Որովհետեւ այնտեղ խոսք է գնում բանակցությունների այնպիսի մանրամասնություններից, որոնց մասին իշխանության ամենաբարձր ատյանների հետ կապ չունեցող որեւէ մեկը կարող է ընդամենը ենթադրություններ անել, Ահմեդօղլուն, մինչդեռ, խոսում է քաջատեղյակ մարդու վստահությամբ, առարկություն չվերցնող տոնով:

Ի՞նչ է ասում նա:

Ըստ ադրբեջանցի քաղաքագետի, բանակցությունների հիմնական փորձաքարը ԼՂ կարգավիճակի հարցն է: Նա մանրամասնում է, որ Ադրբեջանի նախագահը գտնում է, որ «դրան ներկայումս չպետք է անդրադառնալ»: Միջնորդները ներկայացնում են առաջարկ, որով «ԼՂ-ին տրվում է միջանկյալ կարգավիճակ, ԼՂ-ի հայերը հնարավորություն են ստեղծում, որպեսզի վերադառնան ԼՂ ադրբեջանցիները, իսկ հետո նրանք համատեղ որոշում են ապագա կարգավիճակի որոշարկման հարցը»: Ահմեդօղլուի ներկայացմամբ, «Հայաստանի նախագահը պահանջում է, որ ԼՂ կարգավիճակի հարցով հանրաքվեին հայերն ու ադրբեջանցիները մասնակցեն իրենց ներկա բնակության վայրերում, արդյունքները համադրվեն, եւ որոշվի ԼՂ-ի կարգավիճակը»:

Բնականաբար, Ահմեդօղլուն ամենայն ճշտությամբ չէ, որ ներկայացնում է հարցը: Դա գործնականում անհնար է: Քանի որ այդ դեպքում նա հարվածի տակ կդնի իշխանության վարկը: Մանավանդ այսօր դա Ադրբեջանում շատ անցանկալի է կառավարող կլանի համար:

Բայց նա չի հասկանում, որ ներքին միջավայրում «բարձրացնելով» Իլհամ Ալիեւի նախագահական հեղինակությունը, նույն չափով, դեռ երեւի մի փոքր էլ ավելի, հարվածի տակ է դնում Ադրբեջանի արտաքին քաղաքական՝ այս պահի հիմնական հաղթաթուղթը: Այն է. «Ադրբեջանն ընդունում է մադրիդյան սկզբունքները, Հայաստանը՝ ոչ»: Գերազանցապես դրա վրա է կառուցվում հարեւան երկրի բանակցային դիրքորոշման մասին ողջ քարոզչությունը, ինչից ածանցվում է նաեւ «խնդիրն այլ եղանակներով կարգավորելու իրավունքի» գործոնը:

Այսինքն, Ադրբեջանը ներկայանում է որպես «կառուցողական» կողմ, որն «ընդունում է միջնորդների մշակած առաջարկությունները, մինչեւ վերջին հնարավորությունը չի խուսափում բանակցություններից, բայց եթե դրանք չբերեն արդյունքի, ապա ստիպված է լինելու դիմել այլ միջոցների»: Այսպես են խոսում բոլորը՝ Իլհամ Ալիեւից սկսած մինչեւ «Խոջալուի գործադիր իշխանության ղեկավար» Էլման Մամեդով:

Եվ ահա, Սոչիում սպասվող եռակողմ հանդիպումից առաջ Մուբարիզ Ահմեդօղլուն բացահայտում է, որ ԼՂ կարգավիճակի հարցում Իլհամ Ալիեւի եւ միջնորդների ընկալումները միմյանցից շատ հեռու են: Քանի որ միջնորդներն առաջարկում են, որ ԼՂ-ի «կարգավիճակը պետք է որոշարկվի մի ինչ-որ անցումային ժամանակից հետո», իսկ Ադրբեջանի նախագահը պնդում, որ «եկեք այդ մասին չխոսենք»:

Այս դեպքում նա կարո՞ղ է ասել, որ «սկզբունքորեն ընդունում է մադրիդյան սկզբունքները»: Իհարկե՝ ոչ: Որովհետեւ կարգավորման առանցքային հարցը ԼՂ-ի միջազգայնորեն ճանաչված կարգավիճակն է: Եթե այդ մասին չի խոսվում, ապա մյուս բոլոր հարցերը չեն կարող նույնիսկ քննարկվել:

Ո՞րն է Ադրբեջանի հիմնական սպասումը: Արդեն իսկ կարելի է վստահաբար ասել, որ այդ երկիրը ներկա բանակցություններից որեւէ սպասելիք չունի: Այսպես թե այնպես՝ դրանք շարունակելու դեպքում Իլհամ Ալիեւը կամ Ադրբեջանի որեւէ այլ նախագահ պարտադրված է լինելու ինչ-որ ժամանակ հաշտվել ԼՂ-ի անկախության հետ:

Հետեւաբար, Ադրբեջանն ամեն ինչ պիտի անի, որ բանակցությունները կարգավորման ներկա հայեցակարգով չշարունակվեն: Դրա համար Իլհամ Ալիեւն ընտրել է «տրամաբանականի եւ անտրամաբանականի միջեւ» անվերջ խուսանավելու ճանապարհը՝ հուսալով, որ «ինչ-որ ժամանակ, ինչ-որ հանգամանքներում, ինչ-որ գերհզոր ուժ կպարտադրի, որ հայկական կողմն ընդունի խաղաղության ադրբեջանական պայմանները»: Դրան, անշուշտ, գումարվում է նաեւ «պատերազմի իրավունքի տեսությունը»:

Հավանական է, Իլհամ Ալիեւը Սոչի է մեկնում այդ տեսակետը եւս մեկ անգամ պնդելու: Բայց նա, թվում է, խիստ վտանգավոր հաշվարկ է կատարում: Ահմեդօղլուն, համենայն դեպս, ակնարկում է, որ Ռուսաստանում սկսված է «Պուտին-Մեդվեդեւ մրցակցությունը», եւ գործող նախագահը «պարտադրված է աշխարհին ներկայանալ որպես հակամարտություն լուծող»:

Խնդիրը, սակայն, այն է, որ հակառակ տրամաբանությամբ էլ կարելի է կասկածել, թե արդյոք Մեդվեդեւին այդքան շա՞տ է պետք «հակամարտությունը լուծել այնպես, ինչպես ակնկալում է Իլհամ Ալիեւը»: Կամ՝ Մեդվեդեւը համաձայնեցրե՞լ է «իր մտադրությունը» համանախագահ մյուս երկրների առաջնորդների հետ:

Այս պահին սրանք պատասխան չունեցող հարցեր են: Փոխարենը գրեթե ակնհայտ է, որ ադրբեջանական կողմը բանակցությունները փորձում է պայմանավորել այնպիսի զարգացումներով, որոնք խիստ վտանգավոր հեռանկար են հուշում առաջին հերթին Իլհամ Ալիեւի համար: Նա կարող է դառնալ սեփական խարդավանքների պատանդն ու ի վերջո նաեւ զոհը:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Գերմանացի իրավաբանի սնանկ տեսակետների ադրբեջանական հետքը

**Ադրբեջանական քարոզչամեքենան հաջողացնում է գտնել այնպիսի «փորձագետ-գիտնականների», որոնք ամենայն մանրամասնությամբ ներկայացնում են ադրբեջանական տեսակետը՝ առանց վարանելու դրանք «անկախ» պիտակելով:**

**Հերթական այդպիսի մի «մասնագետի աշխատություն» փետրվարի 16-ին ԱՄՆ Ջորջ Վաշինգտոնի համալսարանի միջազգային հարաբերությունների «Էլլիոթ» դպրոցում ներկայացրել է գերմանացի «իրավաբան» Հեյկո Կրուգերը՝ «Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը. իրավական վերլուծություն» խորագրով գրքի շնորհանդես-քննարկման տեսքով: Այս քննարկումը կազմակերպել էին Վաշինգտոնի Ադրբեջանական ուսումնասիրությունների կենտրոնը եւ «Էլլիոթ» դպրոցը համատեղ: Քննարկմանը մասնակցել են նաեւ ԱՄՆ-ում Հայաստանի դեսպանության եւ ԼՂՀ գրասենյակի ներկայացուցիչները, նաեւ Վաշինգտոնի հայկական կազմակերպությունները:**

**Միջոցառմանը Կրուգերը ներկայացրել է իր գրքի դրույթները եւ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի նախապատմության հիմնահարցի իրավական ասպեկտների սեփական, իսկ ավելի ճիշտ՝ ադրբեջանական մեկնաբանությունը: Կրուգերի ելույթից հետո հարցումների ու մեկնաբանությունների իրենց հասվածն են ներկայացրել Հայաստանի եւ Արցախի ներկայացուցիչները, ներկաների համար հստակեցնելով, որ Կրուգերի վերոնշյալ գիրքը միանգամայն կողմնակալ աշխատություն է ադրբեջանական քարոզչության արդյունք:**

**Հայկական կողմի ներկայացուցիչների խոսքով, ներկայացված գրքում մատուցվում է Ադրբեջանի եւ ոչ թե միջազգային մասնագետի մոտեցումը, այն դեպքում, երբ հենց իրավական ասպեկտները ղարաբաղյան հարցի կարգավորման գործընթացում աներկբա հայանպաստ են:**

**Միջոցառման մասնակիցները ներկայացրել են ղարաբաղյան հիմնախնդրի ծագման պատմությունը, Ադրբեջանի սանձազերծած ագրեսիան եւ դրա հետեւանքները, ադրբեջանական այսօրվա իշխանավորների ռազմատենչ եւ արկածախնդիր քաղաքականությունը, բացահայտ կեղծիքներ տարածելու փաստերը:**

**Հայկական կողմը ներկաների ուշադրությանն է ներկայացրել նաեւ այն հանգամանքը, որ գերմանացի «իրավաբանը» խեղաթյուրել է անգամ մեջբերումները: Երբ միջոցառմանը ներկայացվել են մեջբերումների իրական օրինակներից հատվածներ, հստակ է դարձել, որ գերմանացի իրավաբանի աշխատության պարագայում գիրքն ավելի շուտ կարելի է ադրբեջանական կոչել:**

**Հասկանալի է, որ Ադրբեջանի տնօրինած ռեսուրսների պարագայում դժվար է կանխել այսօրինակ «աշխատությունների» ի հայտ գալը, ինչին ականատես ենք լինում ուզածս միջազգային հավաքի ժամանակ տարբեր անկյուններից սեղաններին հայտնվող ադրբեջանական գրականության առատության առումով: Սակայն թերեւս ժամանակին արձագանքն էլ այսպիսի դեպքերում հնարավորություն է ստեղծում փարատելու ադրբեջանական ապատեղեկատվության թողած տպավորությունը: Բայց միշտ չէ, որ անգամ արձագանքն է լինում ժամանակին...**

**Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԼԻԲԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ

# Լիբիայի դեպքերը թանկացրին նավթը

## *Սեյֆ Քադդաֆին խոսում է «քաղաքացիական պատերազմի» մասին*

**Փետրվարի 21-ին Սինգապուրի ֆոնդային բորսայում բրիտանական Brent մակնիշի նավթի 1 բարելի գինը նախորդ օրվա համեմատությամբ բարձրացել է 1 դոլարով՝ հասնելով 103,5 դոլարի: Նույնպիսի միտում է նկատվել նաեւ ամերիկյան թեթեւ նավթի մատակարարման պայմանագրերի կնքման ժամանակ: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը՝ թանկացումը կապելով Լիբիայի դեպքերի հետ, որոնք կարող են հանգեցնել լիբիական նավթի մատակարարման ընդհատումների:**



**Ըստ Ռոյթերի, Լիբիայի արեւելքում ապրող ալ զուայա ցեղի առաջնորդ, շեյխ Ֆարաջ ալ Զուայը իշխանություններից պահանջել է վերջ դնել ժողովրդի բողոքի ցույցերի ճնշմանը, այլապես կդադարեցվեն լիբիական նավթի մատակարարումներն Արեւմուտքին:**

**Վարֆալլա ցեղի առաջնորդ Աքրամ ալ Վարֆալլին իր հերթին «Ալ Ջազիրա» հեռուստաընկերության եթերում հայտարարել է, որ Լիբիայի ղեկավար Մուամմար Քադդաֆիին առաջարկվել է հեռանալ երկրից: «Մենք եղբայր Քադդաֆիին (ի դեպ, նա այլեւս մեր եղբայրը չէ) ասում ենք, որ նա թողնի երկիրը», հայտարարել է ցեղապետը:**

**Վերջին տվյալներով, Լիբիայի անվտանգության ուժերը կորցրել են երկրորդ քաղաք Բենղազիի վերահսկողությունը: Կարգուկանոնի հաստատման նպատակով այնտեղ ուղարկված զինծառայողներն անցել են ցուցարարների կողմը, բացի մեկ ստորաբաժանումից, որը պաշտպանում է Մուամմար Քադդաֆիի տունը:**

**Human Rights Watch իրավապաշտպանական կազմակերպության տվյալներով, վերջին չորս օրերին ցուցարարների եւ անվտանգության ուժերի բախումների ընթացքում սպանվել է 233 մարդ: Երկրի արեւելքում սկսված հուզումները կիրակի օրը տարածվել են նաեւ մայրաքաղաք Տրիպոլիում: Հեռուստատեսությամբ ելույթ է ունեցել Քադդաֆիի որդիներից մեկը՝ Սեյֆ Քադդաֆին: Նրա խոսքերով, ցուցարարները գրավել են մի քանի ռազմակայան, եւ երկիրը մոտ է «քաղաքացիական պատերազմի» վիճակին:**

**Ռոյթեր գործակալությունը նշում է, որ Լիբիան OPEC-ի անդամ է եւ նավթի ու գազի խոշորագույն մատակարարներից մեկն է: Լիբիայում գործում են այնպիսի էներգետիկ ընկերություններ, ինչպիսիք են բրիտանական BP-ն, ամերիկյան Exxon-ը, իտալական ENI-ն եւ այլն:**

**Հակակառավարական ելույթները սկսվեցին փետրվարի 15-ին եւ վերածվեցին ցուցարարների հետ ոստիկանության եւ հատուկ ծառայությունների ստորաբաժանումների բախումների: Ընդդիմությունը իշխանություններին մեղադրում է սոցիալական խնդիրները լուծելու անկարողության մեջ: Իշխանությունները պնդում են, թե բողոքի ելույթների կազմակերպիչները իսլամիստ արմատականներն են:**

**Ոչ պաշտոնական տվյալներով, փետրվարի լույս 21-ի գիշերը Մուամմար Քադդաֆին փախել է երկրից եւ մեկնել Լատինական Ամերիկա, ենթադրաբար՝ Վենեսուելա: Այդ մասին հաղորդում է «Ալ Արաբիա» հեռուստաալիքը, վկայակոչելով Լիբիայի ընդդիմության աղբյուրներ: Այս տեղեկությունը պաշտոնապես չի հաստատվել: Ոմանք էլ պնդում են, որ նա իր ծննդավայր Սըրթում է: Ստուգելը դժվար է, քանի որ Քադդաֆիի հրամանով երկրում ինտերնետն անջատված է, օտարերկրացի լրագրողների մուտքը՝ արգելված:**

# Թունիսը պահանջում է իրեն հանձնել նախկին նախագահին

**Թունիսի ժամանակավոր կառավարությունը Սաուդյան Արաբիայից պահանջել է իրեն հանձնել նախկին նախագահ Բեն Ալիին: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**Բացի դրանից, Թունիսի նոր իշխանությունները պաշտոնական Էր Ռիադից խնդրել են պարզաբանում տալ սաուդյան Ջիդդա քաղաք փախած Բեն Ալիի առողջական վիճակի առնչությամբ: Փետրվարի 17-ին ստացված որոշ տեղեկությունների համաձայն, նա ինսուլտ է անցկացրել եւ կոմայի մեջ է ընկել:**

**Նախկին նախագահի եւ նրա շրջապատի դեմ հայրենիքում առաջ են քաշվում նոր մեղադրանքներ: Խոսքը մասնավորապես սպանությունների կազմակերպման եւ երկպառակությունների հրահրման մասին է:**



**Կիրակի օրը մայրաքաղաք Թունիսի փողոցներում 4 հազար ցուցարարներ պահանջում էին նոր վարչապետ Մոհամմեդ Գաննուչիի հրաժարականը: Պահանջում էին նաեւ երկիրը դարձնել խորհրդարանական հանրապետություն, իսկ Ֆրանսիային կոչ էին անում չմիջամտել երկրի ներքին գործերին:**

# Շվեյցարական բանկերում Մուբարաքը տասնյակ միլիոններ ունի

Շվեյցարիայի իշխանությունները հայտարարել են, որ Հոսնի Մուբարաքի եւ նրա մերձավորագույն զինակիցների (այդ թվում 4 նախկին նախարարների) հաշիվներում կան տասնյակ միլիոնավոր դոլարներ: Շվեյցարական բանկերը Մուբարաքի եւ նրա մերձավորների հաշիվները սառեցրել են Եգիպտոսի նոր իշխանությունների խնդրանքով: Սառեցված են ընդամենը 12 անձանց հաշիվներ:

Եգիպտոսի մամուլում Մուբարաքի կառավարության նախկին նախարարների գաղտնի հաշիվների առնչությամբ հիշատակվել են տարբեր թվեր՝ 20-ից մինչեւ 70 մլրդ դոլար: ՌԻԱ գործակալությունը նշում է, որ շվեյցարական բանկերի հրապարակած տվյալներն անհամեմատ փոքր են: Ենթադրվում է, որ Մուբարաքի պաշտոնաթողությունից բառացիորեն 1 շաբաթ առաջ նրա մերձավորագույն զինակիցները եվրոպական (այդ թվում շվեյցարական) բանկերից վիթխարի գումարներ փոխանցել են Սաուդյան Արաբիայի եւ Արաբական Միացյալ Էմիրությունների բանկեր:

# Թողարկվել է Արաքս Դավթյանի կատարմամբ ռուսական ռոմանսների ձայնասկավառակը

*Արաքս Դավթյանի (1949-2010) մահվանից հետո լույս է տեսել նրա առաջին հետմահու ձայնասկավառակը: Այն կազմել եւ հրատարակել է Կոնստանտին Օրբելյանը: Ստորեւ ներկայացնում ենք ձայնասկավառակի հրատարակման պատմությունը եւ Կոնստանտին Օրբելյանի հուշերը մեծ երգչուհու մասին:*



Արաքս Դավթյանին հանդիպեցի 22 տարի առաջ Ֆրանսիայի գավառական Տուրս քաղաքում: Նա աշխատում էր իմ ընկեր եւ գործընկեր Վլադիմիր Սպիվակովի եւ վերջինիս «Մոսկովյան վիրտուոզներ» կամերային նվագախմբի հետ: Ես ամբողջովին գերվել էի Արաքսի բյուրեղյա մաքրություն ունեցող ձայնով, վարպետությամբ եւ Մոցարտի հիասքանչ ստեղծագործությունների հանդեպ նվիրվածությամբ: Սա ծանոթություն էր ոչ միայն Արաքս երգչուհու, այլեւ ջերմ եւ հիասքանչ մարդու հետ, ում հետ ես հետո բախտ ունեցա աշխատելու եւ 20 տարվա ընթացքում հանդես գալու ավելի քան 250 համերգներով: Երբ 1991-ին ես նշանակվեցի Մոսկվայի կամերային նվագախմբի երաժշտական ղեկավար, ես խնդրեցի Արաքսին որպես մենակատար հանդես գալու իմ առաջին համերգի ընթացքում Մոսկվայի կոնսերվատորիայի մեծ դահլիճում: Արաքս Դավթյանի հետ մենք համերգներով շրջեցինք ողջ աշխարհով՝ Ճապոնիա, Հարավային Աֆրիկա, Հարավային Ամերիկա եւ Եվրոպա:

Արաքսն օժտված էր արվեստի հանդեպ հավատով եւ անկեղծությամբ: Նա Մոցարտի, Վերդիի, Պուչինիի եւ իհարկե հայ կոմպոզիտորներ՝ Կոմիտասի, Սայաթ-Նովայի, Բաբաջանյանի, Միրզոյանի եւ Հարությունյանի ստեղծագործությունները կատարում էր սեփական մեկնաբանմամբ եւ առանձնահատուկ ճշմարտությամբ: Դժբախտաբար, նրա այդ կատարումներից որեւէ մեկը չի ձայնագրվել: 1990-ականների կեսերին ես կարողացա ձայնագրել այն ստեղծագործությունները, որոնք ներկայացնում եմ ձեզ:

Մեծ նվաճումները մեծ ջանքեր են պահանջում: Հայաստանում ապրող Արքասի ու Մոսկվայում ապրող հիասքանչ դաշնակահար Վլադիմիր Կլեվկեյի հետ մենք մի քանի ազատ շաբաթ էինք գտել, որպեսզի Արաքսը գար Մոսկվա ձայնագրվելու այս ալբոմի համար, ուր, համոզված եմ, ընդգրկված են ռուսական երաժշտական արվեստի գոհարները:

**ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՕՐԲԵԼՅԱՆ**

# Գավառական ներկայացում մայրաքաղաքից

**Օրերս Երեւանի Նորքի թատրոնը հյուրախաղով հանդես եկավ Վանաձորի Հովի. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնում Լիանա Անթառանյանի «Սարերում կյանք կա...» պիեսի բեմադրությամբ:**

**Ծեծված սյուժեով պիեսը զուրկ էր գեղարվեստական մի շարք արժանիքներից: Պիեսից բացակայում էր կոնֆլիկտը, իսկ եթե կոնֆլիկտը բացակայում է, նշանակում է, երկը չի կարող լինել լիարժեք, առավել եւս դրամատիկական: Այն ավելի շատ ուներ էթիկական շունչ, քան դրամատիկական:**

**Թեեւ գրեթե բոլոր դերակատարները պրոֆեսիոնալ եւ հայտնի էին սերիալներից, սակայն ոչ մեկի կերպարը ամբողջական չէր, ինչը, նախ եւ առաջ բխում էր խաղացվող նյութից՝ դրամատուրգիայից: Որքան էլ վերապահումներով դատենք դերակասարների մասին, միեւնույնն է, չկար որեւէ արտիստ, որը կարողանար իր խաղով առանձնանար մյուսներից:**

**Եվ զարմանալին այն էր, որ ամենաթույլ դերակասարը հենց ինքը՝ պիեսի հեղինակն էր, ով նույնպես զբաղված էր ներկայացման մեջ: Նա բնավ չուներ խոսքի կուլտուրա եւ խոսքը հանդիսականին հասցնելու կարողություն: Իսկ կերպարաստեղծման մասին ավելորդ է խոսելը: ՀՀ վաստակավոր արտիստ Սամվել Բաղինյանը փորձում էր գույն բերել ներկայացման մեջ, սակայն նրան չէր հաջողվում դուրս գալ գերխաղի սահմաններից: Գլխավոր դերակատար ՀՀ ժողովրդական արտիստ Կարեն Ջանիբեկյանը ոչինչ առանձնահատուկ չբերեց իր կերպարների պատկերասրահ: Երբեմն թվում էր, թե դերակասարն անելիքը չգիտեր բեմում: Բավական աղքատիկ էին միզանսցենները, հիմնականում օգտագործվում էր նախաբեմը: Զարմանալին այն է, որ այս ներկայացման բեմադրիչը լեգենդար «Աշնան արեւ» ներկայացման բեմադրիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր Արտաշես Հովհաննիսյանն էր, ով Հ. Մաթեւոսյանի վերոնշյալ բարձրարժեք գործով մտավ 20-րդ դարավերջի հայ թատրոնի պատմության մեջ: Թեեւ Վանաձորի հանդիսականները, կուլտուրայից ու հարգանքից ելնելով, ջերմորեն ծափահարում էին դերասաններին, սակայն այդ ծափերը վաստակված չէին:**

**ՆԱԻՐԱ ԶՈՒԼՀԱԿՅԱՆ**
**Բանաստեղծուհի**

# «Կամավորը»

**Փետրվարի 22-ին, ժամը 14:00-ին Հայաստանի Ազգային գրադարանի նիստերի սրահում կցուցադրվի Աննա Թովմասյանի «Կամավորը» ֆիլմը:**

**Ֆիլմը պատմում է երեք ընկերների՝ Դմիտրի Մոտրիչի, Իլյա Կուլիկի եւ Մյասնիկ Գասպարյանի մասին, ովքեր մասնակցել են Արցախյան պատերազմին:**

**«Փաստ է, որ Արցախյան պատերազմում երկու կողմերում էլ կռվել են այլազգիներ: Այլ հարց է, թե ինչ կերպ եւ ինչ աղավաղումներով է միջազգային հանրությանն այդ փաստը ներկայացնում Ադրբեջանը՝ հայկական կողմում կռվողներին որակելով որպես «վարձու մարդասպաններ»», ասում է սցենարի հեղինակ Աննա Թովմասյանը:**

**«Կամավորը» ֆիլմը պատմում է, թե ինչպես եւ ինչու են ազգությամբ ռուս տղաները Վլադիվաստոկ քաղաքից կամավոր եկել Արցախ, մասնակցել պատերազմին, մարտական առաջադրանքը կատարելով՝ զոհվել 1992 թ. Ճարտար գյուղի մատույցներում:**

**Աննա Թովմասյանը ծնունդով Քասախից է, ավարտել է Հր. Աճառյանի անվան համալսարանի իրավագիտության ֆակուլտետը, Մոսկվայի «Ռուս-հայկական թատրոն» ստուդիան, 2003 թվականից աշխատում է ՀՀ հանրային հեռուստաընկերությունում, որպես սցենարիստ:**

**Ազգային գրադարանի Հանրության հետ կապերի եւ միջոցառումների կազմակերպման բաժին**

# Ուխտագնացություն Մադրաս



**Փետրվարի 20-ին հնդկահայոց հոգեւոր հովիվ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ հոգեշնորհ Տ. Խորեն աբղ. Հովհաննիսյանը Ս. Նազարեթ Մայր եկեղեցու վարչության, ճեմարանի ուսուցիչների եւ մի խումբ աշակերտների հետ Կալկաթայից (Հնդկաստան) ուխտի գնաց Չեննայի (Մադրասի) Ս. Աստվածածին եկեղեցի (հիմնադրված՝ 1712 թ.), ուր մատուցվեց Սուրբ պատարագ:**

**Հավարտ Սուրբ պատարագի, կատարվեց հոգեհանգստյան արարողություն եկեղեցու հարակից «Շմավոնյան» պարտեզում, որտեղ իրենց հավիտենական հանգիստն են գտել Հարություն ավագ քահանա Շմավոնյանը, Շահամիր Շահամիրյանը...**

**Մադրասի հայ գաղութը ձեւավորվել է 17-րդ դարում: Այն դարձել է հնդկահայ գաղթօջախի հոգեւոր-մշակութային ոստանը: 1794-1796 թվականներին Մադրասում հրատարակվեց առաջին հայ պարբերականը՝ «Ազդարարը», որի խմբագիրն էր Հարություն ավագ քահանա Շմավոնյանը: Հոգեւորական, ում անունը ոսկե տառերով պիտի գրվի հայ մամուլի եւ մշակույթի պատմության մեջ: 1772 թվականին Շահամիրյանի տպարանում լույս տեսավ արցախցի Մովսես քահանա Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» առաջին հրապարակախոսական տպագիր աշխատությունը: Մեկ տարի անց՝ 1773-ին, նույն տպարանում Մադրասի հայտնի խմբակի անդամները՝ Հովսեփ Էմինը, Տեր Մովսեսը, Գրիգոր Խոջաջանյանը, Շահամիրյանները կյանքի կոչեցին Հայաստանի առաջին սահմանադրությունը՝ «Որոգայթ փառացը»՝ հայ քաղաքական մտքի ամենամեծ նվաճումը:**

**Մադրասը մինչեւ հիմա ունի «Armenian Street» փողոցը, որտեղ էլ գտնվում է Սուրբ Աստվածածին եկեղեցին, որի 300-ամյակը պատշաճորեն կնշի հնդկահայոց հոգեւոր հովվությունըբազմաբնույթ ձեռնարկներով՝ ի խոնարհում մադրասահայ երեւելիների աստվածահաճո ու ազգաշահ գործունեության:**

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ

# «Օսմանյան կայսրության մնացորդները»՝

*ցուցահանդես Նյու Յորքի «Պրես Մանհեթենում»*

**Անցյալ տարվա նոյեմբերի 19-ին Նյու Յորքի «Պրես Մանհեթեն» պատկերասրահում բացված եւ մինչեւ այս տարվա փետրվարի 12-ը գործող «Նոր հանդիպումներ նախկին կայսրության մնացորդների հետ» ցուցահանդեսը կուլտուրական աշխատանքների համեմատության լավ առիթ է ծառայել: Մեկնաբանությունների համար հրավիրված են եղել արվեստաբաններ Դեֆնի Այասը եւ Նաիրի Մելքոնյանը:**

**Ըստ «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի հունվարի 22-ի համարի՝ ցուցահանդեսին մասնակցել են նախկինում Օսմանյան կայսրության (1299-1922) մաս կազմող ազգությունների, այդ թվում՝ հույների, հայերի, բոսնիացիների, հրեաների, լիբանանցիների եւ թուրքերի ներկայացուցիչները, որոնք փորձել են պարզել խզման տարբեր ձեւերի ազդեցությունները եւ հետագայում նոր՝ ինքնուրույն մշակույթ կառուցելու բարդությունները: Մասնակիցների շարքում եղել են Սիլվա Աճեմյանը եւ Ասլիհան Դեմիրդաշը, Հրայր Դեմիրդաշը, Հրայր Անմահունի-Էօլմեսեկյանը եւ Անահիս Գասպարյանը, Մայքլ Բլումը եւ Դամիր Նիկսիչը, Արամ Ջիբիլյանը եւ Աարոն Մատոկսը, Սթեֆանոս Ցիվոպուլոսը եւ Ուրսուլա Իգլին, Ջալալ Թուֆիկը, Սելիմ Կուրան եւ այլն:**

**Ցուցահանդեսի առիթով «Ինչպե՞ս պատկերել վկայի մահը» խորագրով դասախոսություն է կարդացել փետրվարի 3-ին Թուրքիայի Սաբանջի համալսարանի դասախոս պրոֆ. Մարկ Նշանյանը՝ «պատմագրական խեղաթյուրումը եւ Աղետի գրողները» գրքի հեղինակը, ով փիլիսոփայական խորհրդածություններով փորձել է ներթափանցել «վկայի մահը» հասկացության մեջ:**

**Հ. Ծ.**

# Միչիգան

*«Սասունցի Դավթի կերպարանափոխությունները»*

Փետրվարի 14-ին ՀԲԸՄ-ի Միչիգանում գործող Ալեք եւ Մարի Մանուկյան վարժարանի դահլիճում տեղի է ունեցել դասախոսություն «Սասունցի Դավթի կերպարանափոխությունները» թեմայով, կազմակերպությամբ Թեքեյան մշակութային միության եւ Ստամբուլահայերի մշակութային ընկերության: Այդ առթիվ խմբագրությանը հասցեագրված հաղորդագրության փոխանցմամբ՝ անդրադառնալով դյուցազնական եւ մարդկային հարուստ գծերով օժտված կերպարի՝ կյանքի տարբեր շրջանների փոփոխական ձեւավորումներին, հրավիրված դասախոս դոկտ. Հայկ Համբարձումյանը համոզիչ բացատրություններ է ներկայացրել եւ նշել, որ հայկական հերոսների նման ձեւափոխումները ուսումնասիրելով հնարավոր է լինում հասկանալ հայկականից բացի նաեւ հարեւան երկրների հերոսների հատկանշական գծերը, եւ ավելի լայն իմաստով՝ հնդեվրոպական բանահյուսության եւ դյուցազներգության բնորոշ հատկանիշները:

Հայկ Համբարձումյանը ավարտել է Երեւանի պետհամալսարանը, դասավանդել հայ գրականություն եւ աշխատել որպես լրագրող ու սցենարիստ «Շողակաթ» հեռուստաընկերությունում:

**Հ. Ծ.**

# Լույս է տեսել

*Վաղամեռիկ Պերճիկ Քյուրքչյանի էսսեների հավաքածուն*

Դստեր՝ Կարինե Արմենի խմբագրությամբ եւ անգլերեն թարգմանությամբ Լոս Անջելեսում օրերս լույս է տեսել պարսկահայ ինքնուս գրող, էսսեիստ, վաղամեռիկ Պերճուհի Քյուրքչյանի ինքնամաքրմանն ու ինքնաճանաչմանը նպաստող հոդվածների հավաքածուն: Եղեռնից մազապուրծ ծնողների զավակ՝ Պերճուհին «Ներքին դրախտ» խորագրով գրքում բացահայտում է ցեղասպանության խորը ազդեցությունն իր անձնական կյանքի վրա: Գրքում ընդգրկված 37 հոդվածները գրված են եղել բնագրում՝ Ֆարսի լեզվով 1987-88 թվերին: Ներառված ընտանեկան լուսանկարները հուշագրության տեսք են տալիս գրություններին: Գրքի նախաբանում հոգեբան Էհսան Ղարաջիդաշին նշում է «Պերճիկ Քյուրքչյանը հայերի ցեղասպանության աղետալի իրադարձությունը եւ նրա քայքայիչ հետեւանքները, որոնք պատճառ դարձան նրա ընտանիքի տեղահանմանը, դարձրել է ինքնաճանաչման ու մարդասիրական ապրումների հայտնաբերման բերրի մի «հուշասարածք», որն իմ կարծիքով, կարելի է համեմատել Վիկտոր Ֆրանկելի կյանքի իմաստի որոնումների հետ»:

Էսսեները դասավորված են ժամանակագրական կարգով, հեշտ են կարդացվում շնորհիվ դստեր հոյակապ թարգմանության, եւ չափազանց ազդեցիկ են: Դրանցում հեղինակը խորհուրդ է տալիս դրական բառեր օգտագործել, դրական մտքեր արտահայտել եւ երբեք չհիասթափվել:

Ըստ հրատարակման առթիվ խմբագրությանը հասցեագրված հայտարարության «Inner Heave» գիրքը կարելի է ձեռք բերել Գլենդեյլում «Աբրիլ», «Սարդարապատ» գրախանութներում «Քեթաբ», «Պերճ» եւ «Սարդարապատ» գրախանութներում: Հավելյալ տեղեկությունների համար այցելել

http://photokarine.blogspot.com կայքը:

**Հ. Ծ.**

# Թութանհամոնի դամբարանի 19 նմուշներ վերադարձվում են Եգիպտոսին

Եգիպտոսում հայտարարեցին, որ Նյու Յորքի Մետրոպոլիտեն արվեստի թանգարանը 2011 թ. կեսերին՝ Կահիրեի եգիպտական թանգարանին, որտեղ ցուցադրված է փարավոնի ոսկյա դիմակը, կվերադարձնի Թութանհամոնի դամբարանին առնչվող 19 արվեստի գործեր, որոնց մեջ մեծ հետաքրքրություն են ներկայացնում բրոնզե շնիկի արձանը եւ ձեռքի ոսկյա շղթայի մի կտոր՝ սֆինքսի տեսքով:

# Դաշնակահարի նոր ռեկորդը

Ճապոնացի դաշնակահար Յուկիո Յակուշիման, 40 տարեկան, Փարիզի ազգային կոնսերվատորիայի նախկին սանը, հայտարարեց, որ ցանկանում է նոր ռեկորդ սահմանել մայիսի 3-ին Տոկիոյում կայանալիք մարաթոնյան համերգի ժամանակ: Համերգը կտեւի 18 ժամ: Նա կկատարի Շոպենի 212 ստեղծագործություններ, գրված դաշնամուրի համար: Նա կնվագի առանց պարտիտուրի, համերգի ընթացքում կվերցնի 10 կարճ ընդմիջում: Նախկին ռեկորդը նույնպես պատկանում է Յակույոմային: Դա 2010 թ. մայիսին էր, երբ նշվում էր կոմպոզիտորի ծննդյան օրը, երբ նա անընդհատ նվագեց 16 ժամից ավել, կատարեց Շոպենի 166 ստեղծագործություն, նույն հաջողականությամբ:

# Մարզական

## Հայկական ակումբները շարունակում են նախապատրաստությունը Թուրքիայում եւ Կիպրոսում

Հայաստանում ֆուտբոլային նոր մրցաշրջանի մեկնարկին քիչ ժամանակ է մնացել, ուստի բարձրագույն խմբի առաջնության մասնակից թիմերը նախապատրաստական վերջին հավաքներն են անցկացնում:

Հայաստանի չեմպիոն «Փյունիկը» Երեւանում ընդամենը մի քանի օր մնալով, կրկին ուղեւորվեց արտերկիր: Ուսումնամարզական 3-րդ հավաքի վայր է ընտրվել Թուրքիայի Բելեկ քաղաքը: Հիշեցնենք, որ նախորդ երկու հավաքները փյունիկցիները անցկացրել էին Ռուսաստանում ... 



Թուրքիայի Բելեկ քաղաքում հերթական ստուգողական հանդիպումն անցկացրեց «Բանանցը», որը 0-3 հաշվով զիջեց Կրասնոդարի «Կուբանին»: 2 գոլ է խփել Կալիմուլինը, մեկ անգամ էլ աչքի էլ ընկել Սկվերնյուկը: 81-րդ րոպեին «Բանանցը» 11 մ հարվածի իրավունք է ստացել, սակայն Սամվել Մելքոնյանին չի հաջողվել հաղթող դուրս գալ դարպասապահի հետ մենամարտում: Վերջինս հետ է մղել գնդակը, իսկ Խաչատուր Ավետիսյանի 2-րդ հարվածը բարձր է ստացվել:

«Բանանցի» 2-րդ կազմը մրցել է Գրոզնու «Թերեքի» փոխարինողների հետ: 1-0 հաշվով հաղթել են «Թերեքի» ֆուտբոլիստները:

Անհաջողությունները շարունակում են հետապնդել «Միկային»: Կիպրոսում Արմեն Շահգելդյանի սաները 3-րդ անընդմեջ պարտությունը կրեցին: Այս անգամ «Միկան» 1-3 հաշվով զիջեց Օրենբուրգի «Գազովիկին»: Այսօր «Միկան» եւս մեկ հանդիպում կանցկացնի: Կիպրոսում է նաեւ Դիլիջանի «Իմպուլսը», որը 1-2 հաշվով պարտվեց Եկատերինբուրգի «Ուրալին»:

Ինչ վերաբերում է Երեւանի «Արարատին», ապա թիմն առայժմ գլխավոր մարզիչ չունի: Արարատցիների հետ մարզումներ է անցկացնում թիմի 2-րդ մարզիչ Էդգար Սաֆարյանը: Նախկին արարատցին միայն անցյալ մրցաշրջանում է սկսել մարզչական գործունեությունը՝ օգնելով Տիգրան Եսայանին: Սաֆարյանն ինքն էլ խոստովանում է, որ մարզչական աշխատանքի փորձ չունի եւ առայժմ չի կարող իր վրա վերցնել ողջ պատասխանատվությունը:

## Հայ ըմբիշները Մինսկում ձախողվեցին

Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականը չափազանց անհաջող ելույթ ունեցավ Մինսկում անցկացված աշխարհի գավաթի խաղարկությունում՝ զբաղեցնելով ընդամենը 7-րդ տեղը: Ճիշտ է, որոշակի արդարացում կարող է լինել այն, որ մեր հավաքականը Մինսկում հանդես եկավ երիտասարդական կազմով: Մեր թիմի կազմում ընդգրկված էին Արմեն Զոմարյանը, Նարեկ Խաչատրյանը (երկուսն էլ՝ 55 կգ), Արթուր Մկրտչյանը, Արտակ Հարությունյանը (երկուսն էլ՝ 60 կգ), Հովհաննես Վարդերեսյանը, Արամ Ձուլֆալակյանը (երկուսն էլ՝ 66 կգ), Վարշամ Բորանյանը (74 կգ), Տիգրան Սահակյանը, Հրայր Հովհաննիսյանը (երկուսն էլ՝ 84 կգ), Սարգիս Տոնոյանը (96 կգ) եւ Վաչիկ Եղիազարյանը (120 կգ):

Իսկ ահա մեր առաջատար ըմբիշները, օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր Ռոման Ամոյանը (55 կգ), Վահան Ջուհարյանը եւ Սասուն Ղամբարյանը (երկուսն էլ՝ 66 կգ), աշխարհի փոխչեմպիոն Արսեն Ջուլֆալակյանը (74 կգ) եւ Արթուր Շահինյանը (84 կգ), Արամ Գասպարյանի գլխավորությամբ հանդես եկան Սլովենիայի Մուրսկա Սոբոտա քաղաքում անցկացվող Գրան պրիի մրցաշարում: Հայաստանի հավաքականն ընդգրկված էր A խմբում: Առաջին հանդիպումը մեր ըմբիշները 1-6 հաշվով տանուլ տվեցին ՌԴ ընտրանուն: Մեր թիմին միակ միավորը պարգեւեց Արթուր Մկրտչյանը՝ հաղթելով Իվան Կույլակովին: Հաջորդ հանդիպումը մեր հավաքականն անցկացրեց ղազախների հետ ու պարտվեց 2-5 հաշվով: Մեր թիմից հաղթեցին Վարշամ Բորանյանն ու Հրայր Հովհաննիսյանը: Ադրբեջանցիների հետ հանդիպումը մերոնք լրիվ ձախողեցին՝ մրցակցին զիջելով քաշային բոլոր 7 կարգերում էլ: Միակ հաղթանակը խմբային մրցաշարում մեր հավաքականը տոնեց Բուլղարիայի ընտրանու նկատմամբ (5-2):



Մեր թիմից հաղթեցին Արթուր Մկրտչյանը, Արամ Ձուլֆալակյանը, Վարշամ Բորանյանը, Հրայր Հովհաննիսյանն ու Սարգիս Տոնոյանը: Մեր հավաքականը A խմբում զբաղեցրեց 4-րդ տեղը, իսկ լավագույնը ՌԴ հավաքականն էր: 7-8-րդ տեղերի համար պայքարում հայ ըմբիշները 6-1 հաշվով հաղթեցին Կուբայի հավաքականին, որը եւս ոչ մարտական կազմով էր ասպարեզ դուրս եկել: Հայաստանի հավաքականը զբաղեցրեց 7-րդ տեղը: Հաղթող ճանաչվեց Իրանի ընտրանին, որը համառ պայքարում 4-3 հաշվով պարտության մատնեց ռուսներին: 3-րդ տեղը գրավեց Բելառուսի հավաքականը՝ 4-3 հաշվով առավելության հասնելով Ադրբեջանի ըմբիշների նկատմամբ:

## Նալբանդյանը 19-րդն է

**Բուենոս Այրեսում ավարտված թենիսի միջազգային մրցաշարում Դավիթ Նալբանդյանը պայքարից դուրս մնաց քառորդ եզրափակիչում՝ պարտվելով իտալացի Թոմի Ռոբրեդոյին (4-6, 4-6): Վերջինս կիսաեզրափակիչում պարտվեց իտալացի Նիկոլաս Ալմագրոյին (5-7, 1-6): Ալմագրոն հաղթարշավը շարունակեց նաեւ եզրափակիչում՝ առավելության հասնելով արգենտինացի Խուան Իգնասիո Չելայի նկատմամբ (6-3, 3-6, 6-4):**

**Թենիսիստների դասակարգման նոր ցուցակում Դավիթ Նալբանդյանը 19-րդ տեղում է: Նա ունի 1655 միավոր: Ցուցակը 12390 միավորով գլխավորում է իսպանացի Ռաֆայել Նադալը, որին հաջորդում են Ռոջեր Ֆեդերերն (7965) ու Նովակ Ջոկովիչը (7880):**

## Լինարեսի մրցաշարը կկայանա աշնանը

Սովորաբար փետրվարի վերջին իսպանական Լինարես քաղաքում մեկնարկում էր շախմատի ավանդական գերմրցաշարը, որի մասնակիցների թվում էր լինում նաեւ Լեւոն Արոնյանը: Սակայն այս տարի ընտրություններով պայմանավորված, որոշվել է մրցաշարն անցկացնել աշնանը:

ՇԱԽՄԱՏ

## Մեկնարկում է Գրան պրիի ավարտական փուլը

**Այսօր Քաթարի մայրաքաղաք Դոհայում մեկնարկում է շախմատի կանանց Գրան պրիի խաղարկության վերջին՝ 6-րդ փուլը: 12 մասնակիցների թվում են Լիլիթ Մկրտչյանը (2475) եւ Էլինա Դանիելյանը (2454): Մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշն ունի հնդիկ շախմատիստուհի Համպի Կոներուն (2607): Հայ շախմատիստուհիների մրցակցուհիների թվում են նաեւ Նանա Ձագնիձեն (2550), Անտոնետա Ստեֆանովան (2546), Պիա Կրամլինգը (2516), Մայա Չիբուրդանիձեն (2502), Ժժու Չենը (2495), Մարի Սեբագը (2489), Սյույ Յույհուան (2484), Բատույագ Մոնգոնտույը (2410) եւ Մարթա Ֆիեռոն (2353):**

**Այս մրցաշարով ավարտվում է շախմատի կանանց Գրան պրիի խաղարկությունը: Հիշեցնենք, որ շախմատիստուհիներից յուրաքանչյուրը պետք է մասնակցի նման 4 մրցաշարի, իսկ միավորները հաշվարկելիս հաշվի են առնվում ցույց տված 3 լավագույն արդյունքները:**

**Մեր շախմատիստուհիների համար Դոհայի մրցաշարը Գրան պրիի խաղարկությունում 4-րդն է: Նրանք պետք է ձգտեն ավելի հաջող հանդես գալ, որպեսզի կարողանան բարելավել իրենց ցուցանիշները: Առայժմ Էլինա Դանիելյանն ընդհանուր հաշվարկով վաստակել է 223,3 միավոր, Լիլիթն ունի 213,3 միավոր: Նշենք, որ ընդհանուր հաշվարկով առաջին տեղը զբաղեցրած շախմատիստուհին իրավունք կստանա աշխարհի չեմպիոնուհու թագը վիճարկել տիտղոսի ներկայիս տիրոջ՝ Հոու Յիֆանի հետ: Հետաքրքրական է, որ հենց վերջինս էլ 410 միավորով գլխավորում է Գրան պրիի մասնակիցների ցանկը: Բնականաբար, նրա հետ պայքարելու իրավունք կստանա ցուցակում 2-րդ տեղը զբաղեցրած շախմատիստուհին: Առայժմ լավագույն արդյունքն ունի Նանա Ձագնիձեն՝ 390 միավոր, որը խաղալու է Դոհայում: 2-րդ ցուցանիշն ունի Տատյանա Կոսինցեւան (383,3 միավոր): Կոսինցեւան չի մասնակցում Դոհայի մրցաշարին, ուստի 1-ին տեղի համար պայքարում Ձագնիձեի գլխավոր մրցակցուհին հնդիկ շախմատիստուհի Համպի Կոներուն է, որն ունի 323,3 միավոր:**

**Ցավոք, մեր շախմատիստուհիները հնարավորություն չունեն պայքարելու 1-ին տեղի համար ու գերազանցելու Նանա Ձագնիձեին: Գրան պրիի նախորդ խաղարկություններում Էլինա Դանիելյանն առավել հաջող է խաղացել Ստամբուլում, որտեղ 8 միավորով զբաղեցրել է 2-րդ տեղն ու վաստակել հաշվարկային 120 միավոր: Իսկ ահա Նալչիկում նա շատ անհաջող խաղաց՝ 1,5 միավորով եզրափակելով աղյուսակը: Նալչիկում Էլինան ընդամենը հաշվարկային 10 միավոր վաստակեց: Ջերմուկում Դանիելյանը 6,5 միավորով գրավեց 5-րդ տեղը, որի համար ստացավ հաշվարկային 93,33 միավոր:**

**Լիլիթ Մկրտչյանն առավել հաջող է հանդես եկել Ջերմուկում, որտեղ 6,5 միավորով զբաղեցրել է 3-րդ տեղը: Նա վաստակել է 93,33 միավոր: Չինաստանի Նանջին քաղաքում Մկրտչյանը 6,5 միավորով գրավել է 5-րդ տեղը: Այդ արդյունքը նրան 80 միավոր է պարգեւել: Իսկ Նալչիկում Լիլիթը 5 միավորով գրավելով 9-րդ տեղը՝ արժանացել է հաշվարկային 40 միավորի:**

## Հայ շախմատիստները մրցանակների չեն հավակնում

**Իրանում ավարտին է մոտենում շախմատային փառատոնը: Մրցաշարի ավարտից մեկ տուր առաջ հայաստանցի 5 շախմատիստներից լավագույն արդյունքն ունի Սարգիս Սարգսյանը, որը 8 հնարավորից վաստակել է 5,5 միավոր: Նա հիանալի անցկացրեց վերջին 4 տուրերը՝ հաջորդաբար հաղթելով Վալի Ղահրեմանիին, Գասեմ Իբրահիմին, Էլդար Ջաբարովին ու Կամրան Պիրվերդիեւին: B խմբում հանդես եկող մեր մյուս շախմատիստը՝ Ռաֆայել Բակունցը 4,5 միավորով 41-րդ տեղում է: Նա անհաջող անցկացրեց վերջին 4 տուրերը: Ոչ-ոքի խաղալով Ալի Վալիզադեի հետ ու հաղթելով Էրաջ Սաբային, Բակունցը վերջին երկու պարտիաներում պարտվեց Ռոհալահ Շամսիին եւ Ադնան Նադիմիֆարին: 7 միավորով աղյուսակը գլխավորում են ադրբեջանցիներ Բահրուզ Ռզաեւը եւ Մեհդի Իսկանդարովը:**

**A խմբի մրցաշարում Գեւորգ Հարությունյանը 4,5 միավորով 31-րդ տեղում է, իսկ Արման Հայրապետյանը 3,5 միավորով 47-րդ հորիզոնականն է զբաղեցնում: 6,5 միավորով առաջատարը վրացի Գիգա Քուպարաձեն է: Կես միավորով նրանից հետ են մնում ռուսաստանցի Սերգեյ Վոլկովը, բելառուս Ալեքսեյ Ֆյոդորովը եւ հոլանդացի Սերգեյ Տիվյակովը:**

**Կանանց մրցաշարում Հայաստանի միակ ներկայացուցիչ Անգելինա Հակոբյանը 8 հնարավորից վաստակած 4 միավորով 40-րդ տեղում է: Այստեղ երկիշխանություն է: 7,5-ական միավորով աղյուսակը գլխավորում են Բելա Խոթենաշվիլին ու Նինո Բացիաշվիլին: Հենց նրանց միջեւ էլ կընթանա պայքարը հաղթողի կոչման համար, քանի որ առաջատարները 1,5 միավորով առաջ են անցել իրենց մոտակա հետապնդողներից:**

## «Գանձասարի» հաղթական մեկնարկը

**Կապանի «Գանձասարը» հաղթանակով մեկնարկեց Աշգաբադում սկսված ֆուտբոլի «Թուրքմենբաշու գավաթի» մրցաշարում: Կապանցիները 1-0 հաշվով պարտության մատնեցին թուրքմենական «Ալթին Ասիրին»: Այսօր «Գանձասարը» կմրցի Մախաչկալայի «Անժիի» հետ, որը մրցաշարում հանդես է գալիս փոխարինող կազմով:**

## Ռոբերտո Կառլոսը ներկայացվել է «Անժիի» ֆուտբոլասերներին

**Բրազիլացի հանրահայտ ֆուտբոլիստ Ռոբերտո Կառլոսը, որն ընթացիկ մրցաշրջանում հանդես է գալու Մախաչկալայի «Անժիի» կազմում, ներկայացվել է ֆուտբոլասերներին: 37-ամյա ֆուտբոլիստը «Անժիում» կխաղա 3-րդ համարի մարզաշապիկով: Նա իր ֆուտբոլային ողջ կարիերայում խաղացել է հենց այդ համարի մարզաշապիկով, այդ թվում նաեւ Մադրիդի «Ռեալում» ու Բրազիլիայի ազգային հավաքականում: «Անժիի» մարզաշապիկը բրազիլացուն է հանձնել թիմի գլխավոր մարզիչ Գաջի Գաջիեւը:**



**Ռոբերտո Կառլոսը 2,5 տարվա պայմանագիր է կնքել «Անժիի» հետ: Նա մտադիր է այդ թիմում ավարտել կարիերան:**

**«Ինձ շատ հաճելի է գտնվել այստեղ: Հուսով եմ, որ իմ փորձն օգտակար կլինի «Անժիին»: Խաղացել եմ 6 ակումբներում: ՌԴ առաջնությունը ծանր փորձություն է ինձ համար: Սակայն հավատում եմ, որ կհաջողվի ուժեղ կոլեկտիվ ձեւավորել եւ ինչ-որ ժամանակ չեմպիոն դառնալ: Շատ եմ ցանկանում խաղալ «Անժիում» եւ շատ գոլեր խփել», նշել է Ռոբերտո Կառլոսը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Օրվա հետքերով

## Զինավաճառքի գծով առջեւում են ԱՄՆ-ը եւ Արեւմտյան Եվրոպան

Ստոկհոլմում գործող Խաղաղության խնդիրների հետազոտության միջազգային ինստիտուտը (SIPRI) հրապարակել է 2009-ի ռազմարդյունաբերական 100 խոշորագույն ընկերությունների ցանկը: Առաջին տեղում ամերիկյան «Լոքհիդ Մարտին» ընկերությունն է, որի հասույթը 2009-ին կազմել է 33,43 մլրդ դոլար: «Լոքհիդ Մարտինին» հաջողվել է առաջ անցնել բրիտանական BAE Systems-ից, որը զենքի վաճառքից ստացել է 33,25 մլրդ դոլար եւ զբաղեցնում է ցանկի 2-րդ հորիզոնականը:



Առաջին տասնյակում են եւս 7 ամերիկյան ընկերություններ. Boeing (3-րդ տեղ, 32,3 մլրդ դոլար), Northrop Grumman (4-րդ տեղ, 27 մլրդ), General Dynamics (5-րդ տեղ, 25,6 մլրդ), Raytheon (6-րդ տեղ, 23,1 մլրդ), L-3 Communications (9-րդ տեղ, 13 մլրդ) եւ United Technologies (10-րդ տեղ, 11,1 մլրդ):

Բացի BAE Systems-ից, տասնյակում հայտնվել են եւս 2 արեւմտաեվրոպական ընկերություններ՝ EADS եվրոպական կոնցեռնը (7-րդ տեղ, 15,9 մլրդ) եւ իտալական Finmeccianica ընկերությունը (8-րդ տեղ, 13,3 մլրդ):

SIPRI-ի ցանկում հայտնվել է նաեւ ռուսական 6 ընկերություն: Դրանց մեջ ամենաբարձր՝ 23-րդ տեղը զբաղեցնում է «Ալմազ-Անթեյը» (3,3 մլրդ): 29-րդ տեղում է «Միացյալ ավիաշինական կորպորացիան» (2,7 մլրդ):

Չինական ընկերությունները ցանկում ընդգրկված չեն հավաստի տվյալների բացակայության պատճառով, նշում է «Ֆիգարո» թերթը:

Ցանկում ընդհանուր առմամբ ներկա են ամերիկյան 45 եւ արեւմտաեվրոպական 33 ընկերություններ: Դրանց համատեղ հասույթը կազմել է 368 մլրդ դոլար կամ զենք արտադրող 100 խոշորագույն ընկերությունների վաճառքի հանրագումարի 91,7 տոկոսը:

Ցանկի 100 ընկերությունների վաճառքի ընդհանուր ծավալը 2008-ի համեմատությամբ 2009-ին աճել է 8 տոկոսով (14,8 մլրդ դոլարով) եւ կազմել է 401 մլրդ դոլար:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ

International Finance Corporation
World Bank Group

www.energyexpo.am
ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ԷՔՍՊՈ 2011

Համաշխարհային բանկի խմբի անդամ IFC-ն հրավիրում է Ձեզ մասնակցելու ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ԷՔՍՊՈ 2011 ցուցահանդեսին, որը տեղի կունենա 2011 թ. մարտի 10-12-ը, «Մոսկվայի տուն Երեւանում» ՄՄԳԿ-ում:
Հասցե՝ Երեւան, Արգիշտի 7
Ցուցահանդեսի ընթացքում կներկայացվեն արդի էներգաարդյունավետ սարքավորումներն ու տեխնոլոգիաները, ներառյալ՝
✓ ջերմամեկուսիչ նյութեր,
✓ ջեռուցման եւ օդափոխության սարքավորումներ,
✓ էներգախնայող լուսային համակարգեր,
✓ էներգառեսուրսների օգտագործման ավտոմատ համակարգեր և այլն:

Կազմակերպիչ՝
Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային Ֆինանսական Կորպորացիա (IFC)
Նախագիծը ներկայացնում է՝
"Էքսպոմեդիա" ցուցահանդեսների նախագծման կենտրոնը
Հասցե՝ 0001, Երեւան, Աբովյան 16
Հեռ/ Ֆաքս՝ (+374 10) 563 899 569 244
Բջջ (+374 93) 777 052 777 053
mail: energyexpo11@gmail.com

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

***Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը հայտարարում է մրցույթ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գործող սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի տեղակալի թափուր պաշտոնի համար***

**Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝**

*1. Ագրարային տնտեսագիտության, իրավագիտության, բնական, անասնաբուժական գիտությունների, սննդի հիգիենայի մագիստրոսի եւ ավելի բարձր աստիճան*

*2. Ծանոթություն ԵՄ համայնքային համաձայնությանը (EU Acquis Communitaire), միջազգային օրենսդրությանը եւ սանիտարիայի ու բուսասանիտարիայի կարգավորման ստանդարտներին*

*3. Աշխատանքային փորձ նախագծի կառավարման բնագավառում*

*4. Սանիտարիայի եւ բուսասանիտարիայի կարգավորման հարցերով զբաղվելու մասնագիտական փորձ*

*5. Իրավական ակտերի մշակման աշխատանքային փորձ, ծանոթություն սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության, բուսասանիտարիայի օրենսդրությանը*

*6. Կառուցվածքային փոփոխությունների աշխատանքային փորձ*

*7. Ծանոթություն միջազգային հավաստամագրման կանոններին եւ պահանջներին*

*8. ԵՄ քաղաքականության եւ ծրագրերի իմացություն*

*9. Եվրոպական հարեւանության քաղաքականության (ENP) եւ Արեւելյան գործընկերության շրջանակում հարեւան երկրների՝*

*a. ԵՄ-ին ինտեգրման գործընթացի մասին իրազեկություն եւ պատկերացում*

*10. Գրավոր եւ բանավոր հաղորդակցման գերազանց հմտություններ*

*11. Անգլերեն լեզվի ազատ տիրապետում. ռուսերեն լեզվի իմացությունը կդիտվի որպես առավելություն*

*12. Համակարգչային հմտություններ*

**Աշխատանքի նկարագրություն՝**

1. Ռիսկերի վերլուծության եւ փաստաթղթավորության մեխանիզմների ներդնում.

2. Գենետիկական ձեւափոխված օրգանիզմների ներմուծման վերահսկողության մեխանիզմների մշակում.

3. Անասնաբուժական եւ սննդամթերքի անվտանգության լաբորատորիաների ցանցի հզորացման իրականացում.

4. Սննդի լաբորատորիաների հավաստամագրումը միջազգային ISO/IEC 17025 ստանդարտների համաձայն.

5. Ազգային երաշխավորված լաբորատորիաների հիմնադրման ռազմավարության մշակում.

6. Ռիսկերի գնահատման ինստիտուտների հզորացում

**Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝**

1) գրավոր դիմում՝ համաձայն կցված ձեւի,
2) քաղվածք՝ աշխատանքային գրքույկից,
3) ինքնակենսագրություն՝ հայերեն եւ անգլերեն լեզուներով,
4) անձնագրի պատճենը

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ուղարկում է հետեւյալ էլեկտրոնային հասցեով՝ ani.barkhudaryan@gov.am

Մրցույթի կիրառվրվեն միայն կարճ ցուցակում ընգրկված թեկնածուները:

Մրցույթը կանցկացվի ՀՀ կառավարության աշխատակազմի շենքում՝ ք. Երեւան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1՝

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2011 թվականի մարտի **14**-ը ժամը **17.00**:

Դիմումների ձեւերը տեղադրված են www.gov.am, www.careercenyer.am կայքերում:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել Հայաստանի Հանրապետության կառավության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչություն՝ **51-57-55** հեռախոսահամարով:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

***Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը հայտարարում է մրցույթ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գործող սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի թափուր պաշտոնի համար***

**Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝**

1. Տնտեսագիտության, ագրարային տնտեսագիտության, իրավագիտության, անասնաբուժության կամ բնական գիտությունների որակավորում (մագիստրոս եւ ավելի բարձր), 10 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ (ներառյալ հանրային կառավարման ոլորտում, որը ներառում է տեղական եւ միջազգային նախագծերի համակարգում եւ կառավարում)

2. ԵՄ-ի համայնքային համաձայնության (EU Acquis Communitaire), սննդամթերքի անվտանգության կառավարման ոլորտում ԵՄ օրենսդրության եւ ստանդարտների իմացություն, միջազգային եւ դոնոր կազմակերպությունների հետ աշխատանքային փորձ.

3. Սննդամթերքի անվտանգության բնագավառում ԵՄ քաղաքականության եւ ծրագրերի ապեկտների խորը իմացություն: Սննդի անվտանգության (անասնաբուժության եւ բուսասանիտարիայի) պետական գործակալությունների կառուցվածքային բարեփոխման եւ հզորարացման եւ իրավական ապահովման աշխատանքային փորձ

4. Արեւելյան գործընկերության (EP) եւ Եվրոպական հարեւանության քաղաքականության (ENP) շրջանակում ԵՄ ինտեգրման գործընթացի խորը իմացություն

5. Գրավոր եւ բանավոր հաղորդակցման եւ համակարգչային գերազանց հմտություններ

6. Անգլերեն եւ ռուսերեն լեզուների ազատ տիրապետումը անհրաժեշտ է

7. Գործարար վարչարարության մագիստրոսի (MBA) աստիճանը եւ երրորդ օտար լեզվի իմացությունը առավելություն է:

**Աշխատանքի նկարագրություն՝**

1. Պետական եւ միջազգային ծրագրերի համակարգում եւ կառավարում

2. ՀՀ-ում սննդամթերքի անվտանգության իրավիճակի եւ միջազգային համաձայնագրերի (ՀՀ-ի եւ ԵՄ միջեւ Գործընկերության եւ Համագործակցության Համաձայնագիր, Առեւտրի Համաշխարհային Կազմակերպության Սանիտարական եւ Բուսասանիտարական Միջոցառումների Համաձայնագիր) պահանջների գնահատում.

3. Սննդի շղթայի հետագծելիության «ֆերմայից պատառաքաղ» ծրագրի ազգային մակարդակով ներդրման յուրահատուկ մեխանիզմների մշակում

4. Փոքր, միջին եւ խոշոր սննդարդյունաբերական ձեռնարկություններում ՎՎՀԿԿ (Վտանգի վերլուծություն եւ հսկման կրիտիկական կետեր) համակարգի ներդրման ռազմավարության մշակում

5. Սննդամթերքի անվտանգության բնագավառում վարչարարության եւ լավ կառավարման ծրագրի մշակում, բարեփոխում եւ ներդրում

6. Սննդի բիզնես օպերատորների գրանցման յուրահատուկ մեխանիզմների մշակում եւ իրականացում

**Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝**

1) գրավոր դիմում՝ համաձայն կցված ձեւի,
2) քաղվածք՝ աշխատանքային գրքույկից,
3) ինքնակենսագրություն՝ հայերեն եւ անգլերեն լեզուներով,
4) անձնագրի պատճենը

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ուղարկում է հետեւյալ էլեկտրոնային հասցեով՝ ani.barkhudaryan@gov.am

Մրցույթի կիրառվրվեն միայն կարճ ցուցակում ընգրկված թեկնածուները:

Մրցույթը կանցկացվի ՀՀ կառավարության աշխատակազմի շենքում՝ ք. Երեւան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1՝

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2011 թվականի մարտի *14*-ը ժամը **17.00-ն**:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել Հայաստանի Հանրապետության կառավության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչություն՝ **51-57-55** հեռախոսահամարով:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը հայտարարում է մրցույթ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գործող սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի տեղակալի թափուր պաշտոնի համար**

**Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝**

1. Ագրարային տնտեսագիտության, իրավագիտության, բնական, անասնաբուժական գիտությունների, սննդի հիգիենայի մագիստրոսի եւ ավելի բարձր աստիճան

2. Ծանոթություն ԵՄ համայնքային համաձայնությանը (EU Acquis Communitaire), միջազգային օրենսդրությանը եւ սանիտարիայի ու բուսասանիտարիայի կարգավորման ստանդարտներին

3. Աշխատանքային փորձ նախագծի կառավարման բնագավառում

4. Սանիտարիայի եւ բուսասանիտարիայի կարգավորման հարցերով զբաղվելու մասնագիտական փորձ

5. Իրավական ակտերի մշակման աշխատանքային փորձ, ծանոթություն սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության, բուսասանիտարիայի օրենսդրությանը

6. Կառուցվածքային փոփոխությունների աշխատանքային փորձ

7. Ծանոթություն միջազգային հավաստամագրման կանոններին եւ պահանջներին

8. ԵՄ քաղաքականության եւ ծրագրերի իմացություն

9. Եվրոպական հարեւանության քաղաքականության (ENP) եւ Արեւելյան գործընկերության շրջանակում հարեւան երկրների՝

a. ԵՄ-ին ինտեգրման գործընթացի մասին իրազեկություն եւ պատկերացում

10. Գրավոր եւ բանավոր հաղորդակցման գերազանց հմտություններ

11. Անգլերեն լեզվի ազատ տիրապետում. ռուսերեն լեզվի իմացությունը կդիտվի որպես առավելություն

12. Համակարգչային հմտություններ

**Աշխատանքի նկարագրություն՝**

1. Սննդամթերքի անվտանգության ծառայության ապահովման համար անհրաժեշտ անասնաբուժական, սանիտարական, բուսասանիտարական եւ սննդամթերքի անվտանգության լաբորատորիաների ցանցի հզորացման ծրագրի մշակում.

2. Սննդամթերքի ներմուծման, արտահանման տարանցիկ փոխադրման սերտիֆիկացման կարգի կատարելագործում համաձայն ԵՄ պահանջների

3. ՀՀ սահմանային հսկիչ կետերում սննդամթերքի ներմուծման, արտահանման եւ տարանցիկ փոխադրման ընթացքում սննդամթերքի անվտանգության վերահսկողության, բուսական եւ կենդանական ծագման սննդամթերքի պաշտոնական ստուգման (անասնաբուժական եւ բուսասանիտարական հսկողության ենթակա եւ այլ մթերքներ) կատարելագործում

4. Սանիտարական, անասնաբուժական եւ բուսասանիտարական բնագավառի օրենսդրության կատարելագործում, մշակում եւ ներդրում՝ համաձայն ԵՄ եւ միջազգային այլ իրավական ակտերի պահանջների՝ սննդամթերքի ներմուծման, արտահանման, տարանցիկ փոխադրման տեսչական ստուգումների գործընթացները երաշխավորելու նպատակով.

5. Ներմուծողների գրանցման իրականացում

**Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝**

1) գրավոր դիմում՝ համաձայն կցված ձեւի,
2) քաղվածք՝ աշխատանքային գրքույկից,
3) ինքնակենսագրություն՝ հայերեն եւ անգլերեն լեզուներով,
4) անձնագրի պատճենը

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ուղարկում է հետեւյալ էլեկտրոնային հասցեով՝ ani.barkhudaryan@gov.am

Մրցույթի կիրառվրվեն միայն կարճ ցուցակում ընգրկված թեկնածուները:

Մրցույթը կանցկացվի ՀՀ կառավարության աշխատակազմի շենքում՝ ք. Երեւան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2011 թվականի մարտի 14-ը ժամը 17.00-ն:

Դիմումների ձեւերը տեղադրված են www.gov.am, www.careercenyer.am կայքերում:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչություն՝ 51-57-55 հեռախոսահամարով:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի մարտի 1-ին, ժամը 12:00–ին ՀՀ ք. Երևան Արմենիա Միջազգային Օդանավակայաններ ՓԲԸ Զվարթնոց օդանավակայանի տարածքում տեղի կունենա Արմենիա Միջազգային Օդանավակայաններ ՓԲԸ Զվարթնոց օդանավակայանի տարածքում գտնվող 4 շենքերի քանդման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երևան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-14-85

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի փետրվարի 28-ին, ժամը 14:00–ին ՀՀ ք. Երևան Արտաշեսյան 62/ա հասցեում տեղի կունենա 110/6կվ «Շենգավիթ» ենթակայանի վերակառուցման հետ կապված աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երևան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-14-85, 220218, 221568

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ամսվա առաջին տասնօրյակում, ժամը 10-ին, «Հայգազարդ» ՓԲԸ-ում ՀԳԱ 0006-11 ծածկագրով կանցկացվի ընկերությանը պատկանող, Հայաստանի Հանրապետության մարզերում եւ Երեւան քաղաքում գտնվող ապրանքանյութական արժեքների մրցույթ-վաճառք:

Հայտերը ընդունվում են «Հայգազարդ» ՓԲԸ-ում, մրցույթին նախորդող 10 օրերի ընթացքում: Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի եւ սոց. քարտի պատճենները, իրավաբանական անձի եւ անհատ ձեռներեցի դեպքում՝ պետ. գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետեւյալ հեռախոսահամարներով՝ (010) 54-78-34, (010) 54-78-36 կամ այցելել «Հայգազարդ» ՓԲԸ՝ ք. Երեւան, Մյասնիկյան պողոտա, 5/1 հասցեով:

**«Հայգազարդ» ՓԲԸ**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 21.2.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: